ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(ՄԱՍՆԱԳԻՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ)

ԳԱՎԱՌ - 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը 5

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ....20

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 38

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ 38

2. Պարտադիր դասընթացներ 41

3. Կամընտրական դասընթացներ 60

4. Հետազոտական կրթամաս 76

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ,

դուք սովորում եք բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանում՝ մագիստրատուրայում, ինչը ենթադրում է նոր պահանջներ, առավել պատասխանատու և լուրջ մոտեցում, հետևողական ու նպատակային աշխատանք, ուսումնական և գիտահետազոտական գործընթացների զուգակցում, կրթական, հետազոտական տարբեր ծրագրերից օգտվելու հնարավորություններ:

Դուք պետք է խորացնեք ձեր տեսական և պրակտիկ գիտելիքները, շարունակաբար ընդլայնեք աշխարհայացքային և մասնագիտական իմացության սահմանները, ձեռք բերեք նոր հմտություններ:

‹‹Իրավագիտություն›› մագիստրոսական կրթական ծրագիրն առավել գիտատար է, և ներառում է պարտադիր ու կամընտրական դասընթացներ, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ, մագիստրոսական թեզի կատարում և ամփոփիչ ատեստավորում: Հենքային դասընթացները և սովորողի ընտրությամբ՝ կամընտրական մոդուլները տեղ են գտնում մագիստրոսի անհատական պլանում և ուսումնասիրվում նրա կողմից: Հիմնական մասնագիտական և միջգիտակարգային՝ լրացական դասընթացները մագիստրատուրայի ուսանողին նախապատրաստում են ոչ միայն արդյունավետ մասնագիտական գործունեության, այլև շարունակական կրթության և գիտահետազոտական աշխատանքի համար: Մագիստրատուրայում բազմազան են դառնում ուսումնասիրվող առարկաները, ուսուցման և հետազոտական աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները:

Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում գործում է կրեդիտային համակարգը, սովորողների գիտելիքների ստուգման և բազմագործոն գնահատման կարգը: Կարևորվում են մագիստրոսի և գիտական ղեկավարի համագործակցությունը, մագիստրոսական թեզի թեմայի ճիշտ ընտրությունը, թեզի պատրաստումն ու պատշաճ ձևով պաշտպանությունը:

Մագիստրոսական կրթական ծրագիրը նախատեսում է ինքնուրույն հետազոտական աշխատանքի մեծ ծավալ, մասնագիտության արդի հիմնահարցերի առավել խոր ուսումնասիրություն՝ հաշվի առնելով գիտության, կրթության, մշակույթի, սոցիալական համակարգի, տեխնիկայի, նորագույն տեխնոլոգիաների,

արհեստական բանականության զարգացման միտումները և, իհարկե, կրթության որակի ապահովման հրամայականը:

Ուստի, դուք պետք է դրսևորեք շահագրգիռ ու ստեղծագործական մոտեցում, ներգրավվեք նոր գիտական հայեցակարգերի ուսումնասիրության ոլորտ և ձեռք բերեք ինքնուրույն գիտահետազոտական ու մանկավարժական աշխատանքի փորձ:

Դուք պետք է նպատակային օգտագործեք մագիստրատուրայում ուսանելու տարիները և դառնաք որակյալ մասնագետներ:

Մաղթում ենք ձեզ հաջողություն, որի գրավականը որակյալ կրթությունն է:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը և դասընթացների նկարագիրը նախատեսված է «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող մագիստրոսի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն՝ ըստ պարապմունքի ձևերի, դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման մեթոդներն ու չափանիշները:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նկարագիրը

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	**Իրավագիտություն/042101.01.7**
2. Բուհը	**‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամ**
3. Ծրագիրը հավատարմագրված է	**–**
4. Շնորհվող որակավորումը	**Իրավագիտության մագիստրոս**
5. Կրթական աստիճանը	**մագիստրոս**
6. Ուսումնառության լեզուն	**Հայերեն**
7. Ուսուցման ձևը	**Առկա**

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- **բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան,**
- **նախորդ կրթական աստիճանում ցուցաբերած բարձր առաջադիմություն,**
- **ընդհանուր պատմատեսական, ճյուղային և հատուկ կիրառական իրավաբանական գիտելիքներ**
- **օտար լեզուների իմացություն**
- **համակարգչային ծրագրերի իմացություն:**

Ընդունելությունը կատարվում է ընդունելության համալիր քննության հիման վրա:

9. Ավարտելու պահանջները.

Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.

- **120 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի մագիստրոսական թեզը:**

Իրավագիտության մագիստրոսի *որակավորման աստիճան ստանալու համար սովորողը հաջողությամբ լրացրել է 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն՝ ներառյալ 12 կրեդիտ ծավալով մագիստրոսական թեզը և 72 կրեդիտ ծավալով մասնագիտական դասընթացների կրթամասը: Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները.*

(Գիտելիք) *ունի բնագավառի վերաբերյալ խոր և համակարգված գիտելիքներ, կարող է օգտագործել իրավագիտական հիմնարար հետազոտությունները, իրավական ինստիտուտ-*

ների և դրանց օրինաչափությունների ուսումնասիրման հիմնական սկզբունքները, տեսություն-ները, ինչպես նաև ունի ոլորտին վերաբերող կիրառական գիտելիքներ, իրավագիտությանը հարակից մասնագիտությունների որոշակի իմացություն,

(Կարողություն) *տիրապետում է իրավական երևույթների հետազոտության մեթոդներին, ունի ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի կատարման, հետազոտության արդյունքների մշակման և գիտական մամուլում հրապարակման, տվյալների բազաների, ծրագրային փաթեթների օգտագործման, արդի պահանջները բավարարող գիտական զեկուցումների, ռեֆերատների, ելույթների, հոդվածների պատրաստման փորձառություն, և՛ տեսական, և՛ կիրառական ոլորտներում ինքնուրույն աշխատելու կարողություն,*

(Հմտություն) *ունի իրավագիտության տարբեր ոլորտներում հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:*

Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

10. Ծրագրի նպատակները և խնդիրները

«Իրավագիտություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել իրավագիտության ոլորտում հիմնարար պատրաստվածություն, հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություն, վերլուծական մտածողություն ունեցող իրավաբաններ, որոնց գործունեությունն ուղղված կլինի իրավական նորմերի պահանջների իրացմանը և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրավակարգի ապահովմանը:

Ելնելով բուհի առաքելությունից՝ Կրթական ծրագիրն իրականացնում է հետևյալ խնդիրները՝

Կրթություն

1. Ստեղծել համագործակցային միջավայր՝ իրականացնելու իրավաբան մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի որակի ապահովման ազգային չափանիշներին, իրավագիտության զարգացման արդի միտումներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն:
2. Տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ

իրավագիտության ոլորտում հիմնարար պատրաստվածություն ձեռք բերելու համար:

3. Ձևավորել իրավաբան մագիստրոսին անհրաժեշտ ընդհանրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:
4. Նպաստել շրջանավարտների մրցունակությանը աշխատաշուկայում և նրա՝

որպես վերլուծական մտածողություն, հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություն ունեցող մասնագետի և հասարակության անդամի ձևավորմանը:

5. Զարգացնել շարունակաբար սովորելու, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, գիտական նյութը մշակելու, համեմատելու, արդյունքները վերլուծելու, մեկնաբանելու, եզրահանգումներ կատարելու, անընդհատ կատարելագործվելու հմտություններ:

Հետազոտություն

1. Խրախուսել ուսանողների կողմից հետազոտական և նորարարական նախաձեռնությունների իրականացումը՝ ծանոթացնելով գիտական ուսումնասիրությունների հիմունքներին և հետազոտական աշխատանքի մեթոդներին:

11. Կրթական ծրագրի մասնագիտական իրազեկությունների /կոմպետենցիաների/ շրջանակը	Ուսումնառության վերջնարդյունքները
Մասնագիտական գիտելիք և իմացություն **Ա 1. Խորը մասնագիտացված գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:** **Իրավագիտության տեսության և պրակտիկայի, օրենսդրության դրույթների, իրավական հիմնարար սկզբունքների և արժեքների, իրավական համակարգի առանցքային տարրերի ու հասկացությունների, ներառյալ ներպետական և միջազգային իրավա կան չափանիշների (այդ թվում՝ ինստիտուտների և ընթացակարգերի) իմացություն:** **Գիտական հետազոտությունների մեթոդների վերաբերյալ ընդհանուր իմացություն և սոցիալ-իրավագիտական ուսումնասիրությունների մեթոդաբանության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք:**	**1. Գիտի** տեսական, ճյուղային, հատուկ իրավաբանական և այլ անհրաժեշտ ոլորտներին առնչվող տեսություններն ու սկզբունքները, մասնավորապես՝ հարկային իրավունքի ինստիտուտները և հարկային իրավահարաբերությունների նորմատիվ կարգավորման կառուցակարգերը, ինչպես նաև դատական պրակտիկայի առանձնահատկությունները, համապատասխան ներպետական և միջազգային իրավական ակտերի հարաբերակցությունը: **Կարող է** ինքնուրույն օգտագործել գիտական հետազոտության մեթոդներ՝ մասնագիտական գործունեություն ծավալելիս և անհրաժեշտ հետազոտություններ իրականացնելիս: **Տիրապետում է** գիտական հետազոտությունների ընդհանուր և սոցիալ-իրավական մեթոդներին:
Ա 2. Հիմնական իրավափիլիսոփայական հայեցակարգերի տիրապետում, իրավաընկալման հայեցակարգերի, իրավունքի զարգացման եղանակների, ինչպես նաև՝ իրավաստեղծման վերաբերյալ խոր և համակողմանի իմացություն:	**2. Գիտի** իրավահասկացության փիլիսոփայական սահմանումը, իրավական արժեբանության, համեմատական իրավագիտության, իրավունքի սոցիոլոգիայի ուսումնառության առարկան, մեթոդները: **Կարող է** վերլուծել իրավունքի փիլիսոփայության հասկացությունը, մեկնաբանել իրավունքի զարգացման միտումներն ու եղանակները: **Տիրապետում** է իրավունքի իմացաբանական-արժեբանական հիմքերին, կողմնորոշիչ-տեղեկատվական, կարգավորիչ գործառույթներին, իրավաընկալման արդի հայեցակարգերին:
Ա 3. Իրավաստեղծ գործունեության հիմունքների իմացություն. մասնակցություն մասնագիտական գործունեության ոլորտին համապատասխան նորմատիվ և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը:	**3. Գիտի** իրավաստեղծման գիտական հիմունքները, ՀՀ օրենսդրության համակարգի կառուցվածքը, ՀՀ պառլամենտական օրենսդրության և պառլամենտարիզմի հիմունքները, դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հիմնական ինստիտուտներն ու սկզբունքները, ՀՀ ընտրական իրավունքի համակարգը, միջազգային պայմանագրի իրավաբանական բնույթն ու նշանակությունը: **Կարող է** վերլուծել իրավաստեղծ գործունեության հիմունքները, հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում պետության իրավական քաղաքականության ուղղությունները, ներկայացնել իրավաստեղծման փուլերը, վերլուծել իրավաստեղծման քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, իրավական գործոնները, հիմնավորել իրավական համակարգում առկա բացի լրացման ուղիները,

	նպաստել իրավաստեղծ գործունեության կատարելագործմանը, վերլուծել պառլամենտական իրավունքի և մյուս ճյուղերի հետ կապը, ընտրական իրավական նորմերը, միջազգային պայմանագրերի կառուցվածքը բացահայտել դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների կառուցվածքը, մասնակցել նորմատիվ և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը: **Տիրապետում է** օրինաստեղծ աշխատանքի հիմնական սկզբունքներին, իրավական փաստաթղթերը ճիշտ կազմելու և իրավանորմեր ձևակերպելու հմտություններին, ընտրական օրենսգրքի դրույթներին և ընտրական հարաբերությունների կարգավորման առանձնահատկություններին:
Ա 4. Իրավակիրառ գործունեություն **ա. Մասնագիտական գործունեության ընթացքում նորմատիվ իրավական ակտերի կիրառման, նյութական և դատավարական /վարույթային/ իրավունքի նորմերի իրացման, իրավական փաստաթղթերի ինքնուրույն մշակման հիմունքների իմացություն:**	4. **ա. Գիտի** նյութական և դատավարական /վարույթային/ իրավունքի նորմերի իրացման կառուցակարգերը, իրավական փաստաթղթերի մշակման հիմունքները: **Կարող է** պատրաստել իրավական ակտի նախագիծ, իրականացնել նորմատիվ իրավական ակտերի իրավական փորձաքննություն, նպաստել իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը: **Տիրապետում է** նյութական և դատավարական /վարույթային/ իրավունքի հիմունքներին, իրացման ու կիրառման ձևերին ու մեթոդներին:
բ. Փաստերի ու հանգամանքների իրավաբանորեն ճիշտ որակում:	**բ. Գիտի** իրավաբանական փաստերի և փաստական կազմի հասկացությունը և տեսակները: **Կարող է** ինքնուրույն բացահայտել էական նշանակություն ունեցող փաստացի իրավաբանական տվյալներն ու հանգամանքները, բացահայտված փաստերին ու հանգամանքներին տալ իրավական որակում: **Տիրապետում է** մասնագիտական գործունեության օբյեկտ հանդիսացող տարբեր երևույթների իրավական որակման, իրավաբանական փաստերի, իրավական նորմերի և իրավահարաբերությունների վերլուծության հմտություններին:
գ. Հիմնավորված իրավական որոշումների ընդունում և գործող օրենսդրության պահանջներին համապատասխան իրավական գործողությունների կատարում:	**գ. Գիտի** իրավական որոշումների ընդունման փուլերը, սկզբունքներն ու կարգը, իրավանորմերի իրացման հասկացությունն ու ձևերը, իրավական կարգավորման կառուցակարգի (մեխանիզմի) տարրերը: **Կարող է** վերլուծել իրավական որոշումները, ներկայացնել դրանց հետևանքները, վերլուծել դատավարական /վարույթային/ նորմերը, կազմել դատավարական փաստաթղթեր, ներկայացնել հիմնավորված առաջարկներ՝ ուղղված դատական ակտերի վերանայմանը: **Տիրապետում է** իրավակիրառ և իրավապաշտպան պրակտիկայի վերլուծության, իրավական

	խնդիրների լուծման, նյութական և դատավարական իրավանորմերի իրացման հմտություններին:
դ. Մասնագիտական գործառույթներն իրականացնելիս բարեվարքության (էթիկայի) կանոնների պահպանում:	**դ. Գիտի** մասնագիտական բարեվարքության նորմերը, էթիկայի ընդհանուր կանոնները: **Կարող է** մասնագիտական գործառույթներն իրականացնել բարեվարքության նորմերին ու սկզբունքներին համապատասխան: **Տիրապետում է** մասնագիտական բարեվարքության հիմունքներին, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ունակություններին:
ե. Օրենսդրության և նախադեպերի կիրառում:	**ե. Գիտի** ՀՀ օրենսդրության համակարգի կառուցվածքը, համապատասխան օրենսդրական ակտը և դատական ու վարչական նախադեպերը կիրառելու փաստական, իրավական և վարույթային հիմքերը: **Կարող է** կիրառել հասարակական հարաբերությունների ոլորտին համապատասխան օրենսդրական ակտը և դատական ու վարչական նախադեպեր: **Տիրապետում է** հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերի, միջազգային իրավական փաստաթղթերի և դատական ու վարչական նախադեպերի հետ աշխատելու, դրանք ՀՀ օրենսդրության հետ համադրելու, մեկնաբանելու և կիրառելու հմտություններին:
Ա 5.*Իրավապաշտպան գործունեություն* **Իրավունքի գերակայության, անձի պատվի ու արժանապատվության հարգման, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքների ու կառուցակարգերի կիրառում**	**5. Գիտի** • իրավունքի գերակայության և օրինականության սկզբունքների հասկացությունը, դերն ու նշանակությունը, մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային միջոցները, ազգային և միջազգային իրավական ինստիտուտների և կառուցակարգերի առանձնահատկությունները: **Կարող է** • կիրառել համապատասխան միջոցներ մարդու իրավունքների խախտման, խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և օրենքով նախատեսված այլ դեպքերում: **Տիրապետում է** մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ միջոցների կիրառման հմտություններին, մարդու խախտված իրավունքների վերականգնման մեխանիզմներին:

Ա 6. Փորձագիտական-խորհրդատվական գործունեություն **ա. վերլուծել և մեկնաբանել ազգային օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային և ներպետական իրավական սկզբունքներն ու նորմերը:** **բ. Կազմել որակյալ իրավաբանական եզրակացություն և տրամադրել խորհրդատվություն իրավաբանական գործունեության կոնկրետ բնագավառներում**	**6. ա.Գիտի** • ազգային /ներպետական/ իրավունքի և միջազգային իրավունքի տարբեր ճյուղերով կարգավորվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները, • ազգային /ներպետական/ իրավունքի և միջազգային իրավունքի նորմերի մեկնաբանման միջոցներն ու ձևերը: **Կարող է** • գրագետ և բազմակողմանիորեն մեկնաբանել ազգային /ներպետական/ իրավունքի և միջազգային իրավունքի նորմերը: • **Տիրապետում է** ազգային /ներպետական/ իրավունքի և միջազգային իրավունքի նորմերի վերլուծության և մեկնաբանության հիմունքներին ու մեթոդներին: **բ.Գիտի** որակյալ իրավաբանական եզրակացություն կազմելու և խորհրդատվություն տրամադրելու սկզբունքներն ու կարգը: **Կարող է.** • տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ և մատուցել իրավական խորհրդատվություն: • **Տիրապետում է** որակյալ իրավաբանական եզրակացություն կազմելու և խորհրդատվություն տրամադրելու հիմունքներին ու փուլերին:
Ա 7. Մասնագիտական գործունեության ընթացքում ժամանակակից գիտահետազոտական մեթոդների կիրառում	**7. Գիտի** • հումանիտար գիտությունների հիմնական հասկացությունները, նրանց կապը իրավագիտության հետ: **Կարող է** օգտագործել այլ գիտությունների հետազոտական մեթոդները մասնագիտական գործունեության ընթացքում, օրենսդրական ակտեր մշակելիս՝ նրանցում մարդասիրական արժեքները և սոցիալական արդարության սկզբունքներն ամրագրելու նպատակով: **Տիրապետում է** • իրավունքի տարբեր աշխարհայացքային ընկալումների վերլուծության, • արդի հասարակության զարգացման միտումների, իրավական վերլուծությունների համար տարբեր փիլիսոփայական մեթոդների օգտագործման հմտություններին:
Կրթական ծրագրի գործնական մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը	***Ուսումնառության վերջնարդյունքները***
Բ 1. Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն	1. **Գիտի** մասնագիտական գործունեության բնագավառում առաջացող գործնական իրավիճակների առանձնահատկությունները:

Բ 2. Վերլուծական (քննադատական) մտածողություն և խնդիրների լուծում. իրավական խնդիրները (կոնֆլիկտները) բացահայտելու և ձևակերպելու, վերլուծելու և սինթեզելու, փաստարկներ առաջադրելու և գնահատելու, լուծումներ առաջարկելու կարողություն: **Բ 3. Իրավաբանական թեմաներով ռեֆերատների, հետազոտական աշխատանքների, մագիստրոսական թեզի պատրաստում, գիտահետազոտական հիմնահարցերի ինքնուրույն ուսումնասիրության մեթոդների ճիշտ ընտրություն ու արդյունավետ կիրառում:**	**Կարող է** կիրառել ունեցած տեսական գիտելիքները գործնական իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, ծագած խնդիրները լուծելու համար: **Տիրապետում է** գիտելիքները մասնագիտական գործունեության մեջ կիրառելու հմտություններին: 2. **Գիտի** իրավական խնդիրների, կոնֆլիկտների ծագման պատճառների բացահայտման ուղիները և դրանց լուծման միջոցները: **Կարող է** խնդիրները լուծել վերլուծական (քննադատական) մտածողության կանոններով: **Տիրապետում է** իրավական խնդիրները (կոնֆլիկտները) բացահայտելու և ձևակերպելու, վերլուծելու և սինթեզելու, փաստարկներ առաջադրելու և գնահատելու, լուծումներ առաջարկելու հմտություններին: 3. **Գիտի** իրավաբանական թեմաներով ռեֆերատների, հետազոտական աշխատանքների, մագիստրոսական թեզի պատրաստման կարգն ու սկզբունքները: **Կարող է** ուսումնառության, գիտահետազոտական պրակտիկայի, ռեֆերատների, համապատասխան իրավական փաստաթղթերի ու նորմատիվ-իրավական ակտերի ուսումնասիրման արդյունքում լուծել կոնկրետ գործնական իրավական խնդիրներ, անել հիմնավորված և տրամաբանված եզրակացություններ, կատարել հետազոտական աշխատանքներ, առաջարկել խնդրի (կոնֆլիկտի) լուծման տարբերակներ՝ ելնելով կողմերի շահերից: **Տիրապետում է** վերլուծելու և սինթեզելու, հետազոտություն իրականացնելու մեթոդներին, ինչպես նաև վերացական մտածողության հնարքները և միջոցները գործնականում կիրառելու, տարբեր իրավական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը համադրելու և օգտագործելու հմտություններին:
Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը **Գ 1. Գրագետ ու փաստարկված գրավոր ու բանավոր խոսք հայերեն և օտար լեզուներով. իրավական եզրույթների և համապատասխան իրավական նորմերի օգտագործում՝ մտքերը սահուն ձևով արտահայտելու, հիմնավորված եզրակացություններ անելու և դրանք բանավոր և գրավոր ձևերով պատշաճ ներկայացնելու կարողություններ:**	**Գիտի** հայերեն և օտար լեզուներով գրագետ ու փաստարկված գրավոր ու բանավոր կարծիք արտահայտելու կանոնները: **Կարող է** • գրավոր և բանավոր ներկայացնել առավել բարդ և գիտական տեքստեր՝ օգտագործելով հաղորդակցման տարբեր հմտություններ: • ամփոփել և իրավունքի համապատասխան խնդրահարույց հարցերի վերաբերյալ

	ներկայացնել գրավոր և բանավոր դիրքորոշումներ, պարզ ու հստակ խորհրդատվություն տրամադրել իրավական գիտելիքներ չունեցող շահագրգիռ կողմերին՝ համապատասխան իրավունքի ճյուղի, նրա կարգավորման բնագավառի և խնդրի իրավական լուծման ուղիների վերաբերյալ: • **Տիրապետում է** օտար լեզվով մասնագիտության համապատասխան ոլորտում կիրառվող եզրույթներին, հասկացություններին և արտահայտություններին, մասնագիտական թեմաներով տեքստեր կազմելու և թարգմանելու, հաղորդակցվելու հմտություններին:
Գ 2. Առաջնորդություն, թիմային աշխատանք և պատասխանատվություն. թիմում ներդնում ունենալու և աշխատելու, միջառարկայական համագործակցություն իրականացնելու և այլ մասնագիտական բնագավառների ներկայացուցիչների հետ որպես փորձագետ աշխատելու, աշխատանքի համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն:	**2. Գիտի** թիմում աշխատելու հիմնական սկզբունքները: **Կարող է** • արդյունավետորեն կատարել որոշակի գործառույթներ թիմում, հանդես գալ նախաձեռնություններով, մասնակցել ընդհանուր թիմային որոշման կայացմանը, ստանձնել և կատարել առաջադրանքներ: • տրամադրել խորհրդատվական-իրավական օգնություն թիմի անդամներին: **Տիրապետում է** առաջնորդության, թիմային աշխատանքի, միջառարկայական համագործակցություն իրականացնելու և այլ մասնագիտական բնագավառների ներկայացուցիչների հետ որպես փորձագետ աշխատելու, աշխատանքի համար պատասխանատվություն ստանձնելու հմտություններին:
Գ 3. Համակարգչային հմտություններ և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում. մասնագիտական ոլորտում աշխատանքները դյուրացնելու, արագացնելու և խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաներ, արհեստական բանականության գործիքներ կիրառելու, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվություն որոնելու, մշակելու և վերլուծելու կարողություն, ինքնուրույն աշխատանք, նախաձեռնողականություն և ժամանակի կառավարում. պլանավորելու և վերլուծելու, որոշումներ կայացնելու, առաջադրանքը ժամանակին և պատշաճ կատարելու կարողություն	**3.Գիտի** • տեղեկատվության ստացման, պահպանման և վերամշակման հիմնական մեթոդները, միջոցներն ու եղանակները. • իրավական տեղեկատվության որոնման ձևերն ու գործիքները: **Կարող է** • ինքնուրույն հավաքել, վերլուծել, գնահատել և մեկնաբանել իրավական հիմնախնդիրներին վերաբերող տվյալներ՝ արդյունավետորեն համադրելով առաջնային և երկրորդային աղբյուրները, • հավաքել և օգտագործել մասնագիտական գործունեության համապատասխան ոլորտներում իրավական նորմերի իրացման

Գ 4. Շարունակական կրթություն. ինքնուրույն սովորելու կազմակերպական և մեթոդական կարողություններ	համար նշանակություն ունեցող նորմատիվ և փաստական տեղեկատվություն, ինքնուրույն մշակել իր թեզի աշխատանքային պլանը, սահմանված ժամկետներում լուծել հետազոտական խնդիրը, գտնել համապատասխան աղբյուրները, մատենագրությունը, խուսափել գրագողությունից՝ պահպանելով ակադեմիական ազնվության սկզբունքը: **Տիրապետում է** • համակարգչից ազատորեն օգտվելու, հայտնի ծրագրային փաթեթներ (Word, Excel, PPT, Internet, էլեկտրոնային որոնման և վերլուծման գործիքներ, արհեստական բանականության գործիքներ) օգտագործելու, էլեկտրոնային գրադարանային համակարգերից և տվյալների բազաներից, արհեստական բանականության գործիքներից, իրավական հիմնական տեղեկատվական համակարգերից օգտվելու հմտություններին: **4. Գիտի** շարունակական կրթության կարևորությունը, օրենսդրական փոփոխություններին հետևելու, համապատասխան իրավական խնդիրը լուծելիս՝ դրանք պարտադիր կիրառելու անհրաժեշտությունը, ինքնուրույն սովորելու մշակույթի զարգացման պահանջը: **Կարող է** 1) ինքնուրույն պլանավորել և կազմակերպել աշխատանքը, նպատակաուղղված շարունակել ուսումնառությունը, պարբերաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը, ուսումնասիրել օրենսդրությունը, օրենսդրական փոփոխությունները և դրա կիրառման պրակտիկան, մասնագիտական գրականությունը, բարելավել մասնագիտական գործունեությունը և ինտեգրվել հարափոփոխ ու պահանջկոտ աշխատանքային միջավայրին, աշխատել բազմամշակութային միջավայրում, արդյունավետ կերպով համագործակցել սոցիալական տարբեր խմբերի և դրանց ներկայացուցիչների հետ, նպաստել այլ անձանց իրավական զարգացմանը: 2) բացահայտել սեփական կրթական կարիքները և ինքնակրթվել, ընտրել մասնագիտական գործունեության զարգացման ուղին, պարբերաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը, ինտեգրվել հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին, գործել ազնվորեն, պատասխանատու և բարեխիղճ կերպով:

	Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

12. Դասավանդման և ուսումնառության մեթոդները

ԳՊՀ-ում իրականացվում է ուսանողակենտրոն ուսուցում, և մագիստրոսի կրթական ծրագրի կենսագործման ընթացքում կիրառվում են դասավանդման ինտերակտիվ՝ փոխներգործուն մեթոդներ, որոնք օգնում են իրականացնել ուսումնական ծրագրի նպատակները: Դասախոսներն առաջնորդվում են հետևյալ մեթոդներով՝

- **Բովանդակային ուսուցում/դասախոսություն/, որի միջոցով ուսանողներին ներկայացվում են հիմնարար գիտելիքներ իրավագիտական տարբեր ոլորտներին առնչվող տեսությունների ու սկզբունքների, դատական պրակտիկայի և համապատասխան իրավական ակտերի վերաբերյալ:**

Մասնագիտական գրականության ընթերցում և բանավեճ-քննարկում, մտագրոհի մեթոդ, գիտաճյուղերի և ուղղությունների, ինչպես նաև ներկայացված նյութերի համադրական ուսումնասիրություն, քննադատական գնահատում, դրա հիման վրա համեմատական վերլուծություն, քննարկում և ամփոփում):

Համագործակցային ուսումնառություն, թիմային աշխատանք՝ նորարարական մանկավարժական մեթոդ, որը խրախուսում է ուսանողին ակտիվ սովորել և կառուցողական համագործակցություն իրականացնել փոքր և մեծ խմբերում, նպաստում է վերլուծական և քննադատական մտածելակերպի ձևավորմանը, մշակում է թիմում աշխատելու, ժամանակը կառավարելու հմտություններ:

Քննարկումներ համապատասխան ոլորտի իրավունքի առաջատար մասնագետների հետ՝ իրավիրելով վերջիններիս դասախոսությունների, շաղկապելու տեսական գիտելիքները պրակտիկայի հետ և մղելու ուսանողներին՝ ընտրել համապատասխան ոլորտի ծառայողական առաջխաղացում (կարիերա)՝ հաջողված պատմությունների/օրինակների միջոցով:

Տեսական գիտելիքների կիրառում համալսարանում գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում, իրավաբանական կլինիկայում, ինչպես նաև համապատասխան կառույցներում և կազմակերպություններում պրակտիկա անցնելու միջոցով: Դասերի ընթացքում նախատեսված թեմաների շրջանակներում նյութա-իրավական, դատավարական փաստաթղթերի, իրավական ակտերի նախագծերի կազմում:

Վերլուծական աշխատանք/քննադատական մտածողություն (դատական նախադեպերի ուսումնասիրություն, դատական պրակտիկայի, վիճակագրության վերլուծություն, տրամաբանական-վերլուծական կարողությունները զարգացնող այլ առաջադրանքների կատարում):

Ուսանողների գիտահետազոտական աշխատանք /հետազոտական մեթոդ/: Հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մագիստրոսի մոտ մասնագիտական ոլորտում հետազոտական, վերլուծական, ստեղծագործական ունակությունների ձևավորում ու զարգացում: Այն օգնում է ուսանողներին իրականացնել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ, խթանել ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումը, ապահովել արդյունավետ հետադարձ կապ դասախոսների հետ (առկա և առցանց էլեկտրոնային հաղորդակցություն), որոնք օգնում են ուսանողին ձեռք բերելու ինքնուրույն հետազոտական, մասնագիտական գործունեության իրականացման կարողություններ:

13. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1-Ա7 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով.

- առաջադրանքներ,
- անհատական ուսումնական հանձնարարություններ,
- բանավոր հարցում,
- ստուգարք,
- քննություն,
- մագիստրոսական թեզի պաշտպանություն:

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Բ1-Բ4 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքներ,
- գիտական զեկուցման, հոդվածի պատրաստում և ներկայացում,
- քննություններ,
- գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկա,
- մագիստրոսական թեզի պաշտպանություն:

Ընդհանրական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Գ1-Գ7 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- զեկուցումներ,
- գրավոր հաշվետվություններ,
- ստուգարքներ,
- մագիստրոսական թեզի պաշտպանություն:

14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Իրավագիտության մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնելու համար համալսարանն ունի համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:

Մագիստրոսական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ռեսուրսների ցանկն ընդգրկում է՝

- ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական սարքավորումներով,
- համակարգչային լսարան՝ համացանցային կապով, գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- ուսումնամեթոդական լսարան,
- էլեկտրոնային հրատարակումների բազայից օգտվելու հնարավորություն:

15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավաժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող առարկային համապատասխանող մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում) և իրականացնում են գիտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական, գիտամեթոդական գործունեություն:

Մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում: Կրթական գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ՝ պրակտիկաների բազային մարմինների, ՀՀ իրավապահ կառույցների, մասնագիտական կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների աշխատակազմից:

«Իրավագիտության» կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա հետևյալ բնութագրերը.

Մասնագետի բնութագիր.

Անձնային որակներ.

1. Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, ինքնադրսևորվելու, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվություն և պատշաճ վարվեցողության նորմեր ձևավորելու, ուսումնառողների ներուժը բացահայտելու և օբյեկտիվ գնահատելու կարողություններ:

Մանկավարժական որակներ.

1. Մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, ՀՀ գործող օրենսդրական ակտերի իմացություն և դրանց ներկայացման, մեկնաբանման, վերլուծության կարողություն, ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացում, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու հմտություն, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների համադրում, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում, ուսումնառողների սովորելու դրդապատճառների ձևավորում և խթանում, դասավանդման

նպատակների և խնդիրների ձևակերպման կարողություն, դասընթացի ծրագրի կազմման և մշակման կարողություն:

Կազմակերպչական բնութագիր.

1. Ուսուցման լավագույն ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցության մոդելավորման կարողություն,
2. Վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն,
3. Անհրաժեշտ ուսումնական միջավայր ձևավորելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու կարողություն,
4. Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման կարողություն:

Հաղորդակցական հմտություններ.

1. Խոսքի բարձր մշակույթի դրսևորում, օտար լեզուների իմացություն,
2. Մանկավարժական հաղորդակցման մշակույթի զարգացում:

Համակարգչային ծրագրերի իմացություն

1. Համակարգչային ծրագրերի ազատ տիրապետում և դասավանդման գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներ կիրառելու հմտություն:

Դասախոսի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները.

1. **գիտի** դասավանդած առարկան, համապատասխան գիտակարգը, ՀՀ պետահիրավական վերնաշենքի կառուցվածքը, կազմավորման և գործունեության սկզբունքները, ՀՀ սահմանադրական կարգի հիմունքները, օրենսդրության համակարգը, իրավունքի հիմնական ճյուղերը, միջազգային և եվրոպական իրավունքի առանցքային ինստիտուները, իրավաստեղծման հասկացությունը և փուլերը, իրավունքի տարբեր ոլորտներին առնչվող տեսություններն ու սկզբունքները, ինչպես նաև տարբեր իրավական դպրոցների և ուսմունքների, դատական և վարչական պրակտիկայի համապատասխան իրավական ակտերը, մասնագիտացման ոլորտի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները,
2. **կարող է** աշխատել նորմատիվ իրավական ակտերով, մեկնաբանել իրավական նորմերն ու սկզբունքները, բացահայտել ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերն ու հակասությունները, առաջարկներ ներկայացնել բացերի լրացման և հակասությունների շտկման վերաբերյալ, իրավական գիտելիքներ հաղորդել դասավանդման արդի մեթոդներով, կազմակերպել և համակարգել մասնագիտական ուսուցման գործընթացի բոլոր փուլերը, վերլուծել ուսուցման

գործընթացի արդյունքները, զարգացնել մասնագիտական և մանկավարժական հմտությունները,

3. **տիրապետում է** մասնագիտական ու մանկավարժական գիտելիքները խորացնելու հմտություններին, մասնագիտական ուսումնասիրման առարկա հանդիսացող տարբեր իրավական երևույթների, իրավաբանական փաստերի, իրավական նորմերի և իրավահարաբերությունների վերլուծության հմտություններին, հետազոտության, ուսուցման, սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդներին, տվյալ ուսուցման ձևին համապատասխան կրթության կազմակերպման համար անհրաժեշտ իրազեկություններին (կոմպետենցիաներին):

16. Հետագա ուսման հնարավորությունները.
Իրավագիտության մագիստրոսը կարող է կրթությունը շարունակել երրորդ աստիճանում (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո) և ստանալ գիտական աստիճան:

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Իրավագիտության կրթական ծրագրի շրջանավարտները կարող են զբաղվել գիտական, հետազոտական աշխատանքով, աշխատել որպես իրավունքի բնագավառի մասնագետ՝ քննիչ, դատախազ, փաստաբան, դատավոր, նոտար, քաղաքացիական ծառայող, իրավախորհրդատու մասնավոր ընկերություններում, միջազգային կազմակերպություններում, կարող են զբաղեցնել այլ պաշտոններ իրավապահ մարմիններում, օրենսդիր մարմնում, պետական կառավարման համակարգում, տեղական ինքնակառավարման մարմիններում:

18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանում իրականացվող ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի կայունությանը նպաստող գործոններն են դիմորդների շրջանում իրավաբանության նկատմամբ եղած պահանջարկը, հանրապետական և մարզային իրավապահ մարմիններում աշխատելու հնարավորությունը, ԳՊՀ շրջանավարտների՝ իրավապահ մարմիններում աշխատելու փորձը, գործատուներից ստացված դրական կարծիքները, ԳՊՀ գործընկեր եվրոպական բուհերում իրավաբան ուսանողների սովորելու հնարավորությունը, համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առկա և հեռակա բաժիններում «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը, բակալավրի որակավորմամբ իրավաբանների՝ մագիստրատուրայի կրթական աստիճանում սովորելու հնարավորությունը, բուհի իրավագիտության ամբիոնի կադրային համալրվածությունը, իրավապահ ոլորտի պրակտիկ մասնագետներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավումը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրով սովորողների համար պրակտիկայի բազայի առկայությունը՝ ի դեմս իրավապահ և դատական մարմինների, ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի

շրջանավարտներին համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի տրամադրումը, իրավաբան մասնագետներին գործատուների կողմից ներկայացվող պահանջների և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանեցման շարունակական աշխատանքը, ՀՀ Սահմանադրության, օրենքների փոփոխություններին համապատասխան կրթական ծրագրի բովանդակության վերանայումն ու արդիականացումը, ԳՊՀ-ում իրավաբանական կլինիկայի առկայությունը, ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման՝ ‹‹Learn.GSU›› համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ ‹‹E-Library.GSU›› առկայությունը:

Միաժամանակ, կրթական ծրագիրը զերծ չէ ռիսկայնությունից: Բացասական գործոններ են ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության գծով պետպատվեր (անվճար) տեղերի բացակայությունը, ուսանողների միջև փոխատեղման (ռոտացիայի) մրցույթի հնարավորության բացակայությունը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության համեմատաբար բարձր ուսման վարձավճարը, որոշ հովանավոր կազմակերպությունների կողմից իրավագիտության բաժնի ուսանողներին չֆինանսավորելը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի՝ օտար լեզվով մշակված չլինելը, արտասահմանցի դիմորդների բացակայությունը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության գծով ԳՊՀ-ում ասպիրանտուրայի բացակայությունը:

Ծրագրի կայունությանը սպառնում են ՀՀ Գեղարքունիքի մարզի ժողովրդագրական բացասական միտումները, ավելացող արտագաղթը, աշխատատեղերի պակասը, գործազրկությունը, ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալական անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, դիմորդների թվի զգալի նվազումը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության ուսանողների՝ եվրոպական ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը, իրավապահ մարմինների աշխատակազմի սահմանափակ թիվը:

Մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունը հաղթահարելու և կայունությունը ապահովելու միջոցներ ենք համարում ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցումը ԳՊՀ-ի և տարբեր հիմնադրամների կողմից, բուհի իրավաբանական կլինիկայի գործունեության արդյունավետության բարձրացումը, ուսանողների համար կազմակերպվող օտար լեզվի լրացական դասընթացները, ամառային և ձմեռային դպրոցները, ՏՀՏ-ների և արհեստական բանականության գործիքների ընձեռած հնարավորությունների օգտագործումը, հեռավար դասերի անցկացումը, օգտակար էլեկտրոնային պաշարների օգտագործումը, վեբինարներին ուսանողների մասնակցությունը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի բարելավման նպատակով համադրական վերլուծության (բենչմարքինգի) իրականացումը:

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, մագիստրոսական թեզի պատրաստմանը, պաշտպանությանը և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում

է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը, մագիստրոսական թեզի պատրաստումն ու պաշտպանությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և մագիստրոսի կրթական ծրագրի աշխատածավալը

2.1. ԳՊՀ-ում մագիստրոսի կրթական աստիճանում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը կազմում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

2.2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

2.3. Ուսումնական տարվա տևողությունը 20 շաբաթ է, որից 14-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ՝ կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 14 շաբաթ:

2.4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

2.5. Մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

2.6. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 120 կրեդիտ է:

3. Դասընթացները և կրթական մոդուլները

3.1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

3.2. Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

3.3. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

4. Ուսումնական ծրագիրը

4.1. Մագիստրոսի ուսումնական ծրագիրը ներառում է երկու հիմնական կրթամաս՝ ուսումնական և հետազոտական, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ:

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1

Կրթամասերի բաշխումն ըստ կրեդիտների

	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ	Ընդամենը
Ուսումնական	27	24	15	6	72
Հետազոտական	3	6	15	24	48

Կրթամասերի բաշխումն՝ ըստ կրեդիտների

Աղյուսակ 2

Կրթամաս	Կրեդիտներ
Ուսումնական	72
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	6
Մասնագիտացված պատրաստման դասընթացներ Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ	66 56 10
Հետազոտական	48
Գիտական սեմինար	9
Գիտահետազոտական աշխատանք	15
Գիտահետազոտական պրակտիկա	6
Գիտամանկավարժական պրակտիկա	6
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12
Ընդամենը	120

4.2. Ըստ մասնագիտությունների՝ կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում: Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20 շաբաթյա տևողությունը, որից 14-ը հատկացվում է տեսական ուսուցմանը, իսկ 6-ը՝ քննաշրջանի համար:

5. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների /կուրսղեկների/ ծառայություն, որում ընդգրկվում են մասնագիտության ուսումնական ծրագրերի քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

Մագիստրոսների գիտելիքների գնահատման համար կիրառվում է համալսարանում գործող 100 միավորանոց սանդղակը՝ համապատասխան ECTS համակարգում գործածվող տառային նիշերի: Դասընթացի գնահատման համար գործածվում է գնահատականի աստիճանական կուտակման սկզբունքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աղյուսակ 3

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A +	4,0	95-100
	A	4,0	87-94
	A -	3,7	81-86
Լավ	B+	3,3	75-80
	B	3,0	67-74
	B-	2,7	61-66
Բավարար	C+	2,3	55-60
	C	2,0	46-54
	C-	1,7	40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

6.1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

6.2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

Տեսական դասընթացների համար

Աղյուսակ 4.

Գնահատվող աշխատաձևերը	Ընդհանուր գնահատականի կառուցվածքը
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Գիտելիքների ընթացիկ բանավոր կամ գրավոր ստուգում	50 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում	40 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Գործնական դասընթացների համար

Աղյուսակ 5.

Դասընթացի աշխատաձևերը	**Գնահատման կառուցվածքը**
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Ընթացիկ ստուգումներ	40 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում (ավարտական քննություն)	50 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Ծանոթություն. Գիտական սեմինարները, պրակտիկաները, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքները ենթակա են գնահատման ստուգված/չստուգված ձևաչափով, որը չի ենթադրում գործոնային հաշվարկ: Ստուգումը կատարվում է մագիստրոսի գիտական ղեկավարի կամ ամբիոնի վարիչի կողմից:

6.3.Քննությունը համարվում է հանձնված, եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը գերազանցում է 40 միավորը կամ գնահատման սանդղակի 40%-ը: Եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը պակաս է 40 միավորից, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում: Դրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում: Մագիստրոսը հեռացվում է համալսարանից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

Մագիստրոսական թեզի գնահատման գործոններ

Աղյուսակ 6

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+/1,7 – 4,0

Աղյուսակ 7

h/h	**Գործոններ**	**Միավոր**
1	Թեզի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Թեզի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները և արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10
4	Թեզի ներկայացումը, պաշտպանությունը	30

Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

7. Ընթացիկ ստուգում

7.1. Ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային ստուգողական աշխատանքները, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները, հոդվածը, զեկուցումը, թեստերի լուծումը և այլն:

7.2. Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի մեթոդները կատարելագործելու, պարապմունքների ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

7.3. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումները իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքները:

7.4. Անկախ ընթացիկ ստուգման տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ ստուգում և գնահատում:

7.5. Ընթացիկ ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ նրա համամասնությունից:

7.6. Ընթացիկ ստուգման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը:

7.7. Եթե ուսումնական պլանի համաձայն որևէ դասընթացից գործնական կամ սեմինար պարապմունք նախատեսված չէ, ապա ընթացիկ ստուգումն անցկացվում է դասախոսի կողմից տվյալ դասընթացի առարկայական ծրագրով նախատեսված պարտադիր գրավոր աշխատանքների (ստուգողական աշխատանք, թեստեր և այլն) կամ բանավոր հարցման միջոցով:

7.8. Ընթացիկ ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի:

Օրինակ 1.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման գնահատա կանի մեջ յուրաքանչ յուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակնե րում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտա կան աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատական ը /5այունակի միավորը. = 3այ.*4այ. /
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը **/Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/**				**25,2=26**

1) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական

	աշխատանքի ստուգման տեսակները	աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5սյունակի միավորը. = 3սյ.*4սյ. /
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը **/Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/**				**12,8=13**

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ

ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

8 Հանրագումարային ստուգում

8.1. Հանրագումարային ստուգման ձևերն են քննությունները և հանրագումարային ստուգարքները (այն մոդուլներից, որոնցից քննություն չի անցկացվում):

8.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

8.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 40 միավորի շրջանակում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

8.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

8.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

8.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

Դասընթացի ընդհանուր ժամաքանակ

8.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

8.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերաբերյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ

այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

8.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

9. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

9.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

9.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

9.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ծրագրային կրեդիտների քանակը,
- որակավորման կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

9.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

9.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

ՈԿ = Կրեդիտ

9.6 Վարկանիշային միավորը ¥ՎՄ¤ յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

ՎՄ = Կրեդիտ Գարդ.

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ 3,0 = 6՝ 8 հնարավորից):

9.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

9.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

10. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Լուծարք

10.1 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

10.2 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25–ից և պակաս՝ 40–ից:

10.3 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

10.4 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել մեկ անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

10.5. Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝ այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, որի արժեքը պակաս է 25-ից, այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, որի արժեքը ավել կամ հավասար է 25–ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

10.6 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

11. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

11.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

11.2 Գնահատման տեսանկյունից չեն առանձնացվում հարգելի և ոչ հարգելի պատճառներով բացակայության դեպքերը:

11.3 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված՝ սահմանված կարգի բժշկական տեղեկանքի և դիմումի առկայության դեպքում:

11.4 Հարգելի պատճառով ընթացիկ ստուգմանը չներկայացած ուսանողն այն կարող է վերահանձնել մինչև հաջորդ ընթացիկ ստուգումն ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի/պարապող դասախոսի հետ:

11.5 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ քննաշրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

11.6 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:

11.7 Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 1,7 միավորը չհավաքած ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում:

11.8 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

11.9 Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

12. Մագիստրոսական ծրագրի հետազոտական հատվածի կազմակերպման ընթացակարգ

12.1. Հետազոտական մոդուլների ժամանակացույցը

Յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ծրագրի ղեկավարը կազմում և մագիստրանտներին է ներկայացնում տվյալ կիսամյակի հետազոտական օրացույցը (ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը): Այն, ըստ կիսամյակի բովանդակության, ներառում է գիտական սեմինարների և պրակտիկաների կատարման ժամանակացույցերը:

12.2. Ատեստավորման կարգը

Ծրագրի հետազոտական հատվածով նախատեսված կրթական մոդուլների հաշվետվության համար կիրառվում է ստուգված/չստուգված նշումով ատեստավորման եղանակ: Գիտական սեմինարների և պրակտիկաների, ինչպես նաև ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների ատեստավորումը կատարում է ծրագրի ղեկավարը, մագիստրանտի գիտական ղեկավարը կամ համապատասխան որակավորման ունեցող այլ անձ: Ուսումնառության առաջին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած մագիստրանտիներին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը երկրորդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսվող աշխատանքը: Երկրորդ և երրորդ կիսամյակներում որևէ մոդուլով չատեստավորված մագիստրանտիները հեռացվում են համալսարանից: Մագիստրանտը հեռացվում է համալսարանից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

13. Ծրագրի Ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը

13.1. Ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը

Ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.
ա/ թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի քննարկմանը: Թեզի հետ միասին ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է մագիստրանտի աշխատանքի հիմնավորված գնահատական,

բ/. մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից ընդդիմախոսի՝ արտաքին գրախոսողի նշանակում,

գ/. մագիստրոսական թեզի նախնական քննարկում մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրանտի գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի կողմից՝ մագիստրանտի մասնակցությամբ:

դ/. Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում թեզը մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից երաշխավորում է պաշտպանության: Եզրակացության մեջ նշվում է թեզի հիմնավորված գնահատականը:

ե/. մագիստրոսական թեզի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

13.2. Մագիստրոսական թեզի գնահատման կարգը

Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով /գնահատականը գոյանում է գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի և պաշտպանության ընթացքում թեզի ներկայացման և դրա շուրջ արված հարցադրումներին տրված պատասխանների գնահատումների հիման վրա/:

13.3. Ծրագրի ավարտական պահանջները

Որակավորում ստանալու համար մագիստրանտը պետք է ծրագրի կատարման ընթացքում լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որից 72 կրեդիտ՝ ուսումնական հատվածից /այդ թվում՝ 60 կրեդիտ պարտադիր դասընթացներից, իսկ 12 կրեդիտ՝ կամընտրական դասընթացներից/ և 48 կրեդիտ՝ հետազոտական հատվածից:

Մինչև ամփոփիչ ատեստավորումը (մագիստրոսական թեզի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը մագիստրանտի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար մագիստրանտը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:

Մագիստրոսներին համապատասխան որակավորմամբ դիպլոմները (սովորական, գերազանցության) տրվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

14. Կրեդիտների փոխանցումը

14.1 Այլ բուհերից ԳՊՀ մագիստրանտի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

14.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ մագիստրանտի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

14.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

14.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

15. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

153.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,

- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

15.2 Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2024-2025 ուսումնական տարի

Աշնանային կիսամյակ

11 սեպտեմբերի 2024թ. – 15 դեկտեմբերի 2024թ.	
Ուսուցման սկիզբ	11 սեպտեմբեր
Ուսուցման ավարտ	15 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	25 դեկտեմբերի – 29 դեկտեմբերի
Քննաշրջան	8 հունվարի - 26 հունվարի
Ձմեռային արձակուրդներ	29 փետրվարի – 9 փետրվարի

Գարնանային կիսամյակ

Աղյուսակ 7

12 փետրվարի 2025 թ. – 18 մայիսի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	12 փետրվարի
Ուսուցման ավարտ	18 մայիսի
Ստուգարքների հանձնում	21 մայիսի-25 մայիսի
Քննաշրջան	29 մայիսի – 15 հունիսի
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	05 մայիսի- 31 մայիսի
Ամառային արձակուրդներ	21 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

2. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

24/Մ17- Օտար լեզու՝ մասնագիտական հաղորդակցման ոլորտում (անգլերեն)

(2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Ուսանողների մոտ արմատավորել և հարստացնել անգլերեն լեզվի քերականական գիտելիքները և մասնագիտական բառապաշարը՝ շեշտադրելով ճշգրիտ քերականական կանոնների կիրառմամբ մասնագիտական խոսքի կառուցումը: Միտված է թարգմանությունների միջոցով, վերլուծական մեթոդներով համեմատել և քննարկել տրված մասնագիտական նյութը անգլերեն և հայերեն լեզուներով՝բացահայտելով և զարգացնելով ուսանողների լեզվական կարողությունները և հաղորդակցական հմտությունները, ինչպես նաև մասնագիտական գիտելիքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ մասնագիտական լեզվի բառապաշարի քերականական և ոճաբանական առանձնահատկությունները, մասնագիտության ոլորտում օտար (անգլերեն) լեզվով ինքնուրույն աշխատանք կատարելու սկզբունքները,

Կկարողանա՝ ձևավորել գիտական բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ, կիրառել մասնագիտական տեքստերի վերլուծության տարբեր մոտեցումները (որոնողական, ճանաչողական, մեկնաբանական)՝ ճիշտ ընկալելով դրանց բովանդակությունն ու կառուցվածքը, իրականացնել մասնագիտական տեքստերի իմաստային, կառուցվածքային և ոճական վերլուծություն և թարգմանություն, ներկայացնել և մեկնաբանել մասնագիտական տեսակետներ ու փաստարկներ, ձևակերպել, շարադրել, հիմնավորել անձնական կարծիքը, քննարկել, բանավիճել մասնագիտական հարցերի արդի հիմնախնդիրների շուրջ:

Կտիրապետի՝ մասնագիտական թեմաներով էսսեներ/ զեկույցներ, ռեֆերատներ, գիտաժողովի թեզիսներ շարադրելու կարողություններին, տեղեկատվական տարբեր աղբյուրներից օտար լեզվով տեղեկատվություն ստանալու, այն վերլուծելու և ներկայացնելու հմտություններին:

Բովանդակությունը.

Unit 1. Present Simple, Present Continuous, exercisesGovernment and the American Citizen: The Constitution and the Federal System of the USAUnit 1.1 Education and employment, Vocabulary:

Issues in education, Text “Google generation has no need for rote learning”, Idioms, Listening, exercises 1, 2. **Unit 2.** Past simple, Past continuous, used to, exercises. The differences between the British and American Constitution, The Supremacy of Parliament

Unit 1.2 Success: Texts: “Indra Nooyi”, “Georges Simenon”, “Angela Jia Kim”, Vocabulary: Suffixes (adjectives), exercises 3,4. **Unit 3.** Vocabulary, Fun and Games. Phrasal Verbs, Prepositional phrases, Word formation, exercises.The history of the Armenian people, translation and discussions Unit 1.3 Job Hunting “Curriculum Vitae”, Vocabulary: Abbreviations, Listening, Administrative division of Armenia, Units 1, 2, 3, Review, exercises.

Choosing the Nation’s President: Selecting the Candidates: Unit 1.4 Scenario “UNESCO Activities”, “Choosing an intern”, Key language: Stating requirements; saying what is essential and desirable. exercises 7. **Unit 4.** Present Perfect Simple, Present Perfect Continuous The Campaign of the USA presidential candidates Unit 1.5 Study and writing skills, “Covering letter”, exercises 1,2,3. **Unit 5.** Past Perfect Simple , Exercises.The Election of the USA president Past Perfect Continuous Exercises.The Inauguration of the USA president. **Unit 6.** Learning and Doing Exercises. Citizenship: Its Obligations and Privileges Units 4,5 and 6 Review 2 Exercises.Becoming a Citizen of the USA. **Unit 7.** Future Tim, Will, Be going to Responsibilities of Citizens. **Unit 8.** Prepositions of time and place. Exercises. Responsibilities of all U.S. Residents. **Unit 9.** Vocabulary, Coming and Going, Word patterns, Phrasal verbs, Prepositional phrases Units 7, 8, 9, Review 3 Տեստային աշխատանք Test writing.

23/Մ2 Գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական հասկացություններն ու առանձնահատկությունները, որոնց իմացությունը սովորողներին թույլ կտա լիարժեք ըմբռնել այդ գործընթացը, այսինքն՝ այն, թե ինչպես ձևակերպել ուսումնասիրության օբյեկտը և առարկան, նպատակները, հետազոտության հիմնախնդիրը (պրոբլեմը), ուսումնասիրություններ և գիտափորձեր կատարել, մասնագիտական գրականություն, պատմական, գիտական, նորմատիվ իրավական աղբյուրներ հավաքագրել, ուսումնասիրել և վերլուծել, հիմնախնդրի վերաբերյալ

փաստեր հավաքել, վարկածներ առաջադրել ու հիմնավորել, ներկայացնել հիմնավորված եզրակացություններ և նորույթ բովանդակող առաջարկություններ:
Գիտության տարբեր բնագավառներում հետազոտության մեթոդներն ունեն իրենց առանձնահատկությունները: Ուստի, սովորողները համադրում են տարբեր գիտակարգերի առաջարկած մեթոդաբանական գիտելիքները, տարբերակում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, ըմբռնում գիտական ճանաչողության գործընթացի յուրահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ «Մեթոդաբանություն և մեթոդ», «գիտական հետազոտություն», «հետազոտության առարկա, օբյեկտ, նպատակ, հիմնախնդիր (պրոբլեմ), վարկած, նորույթ» հասկացությունների բովանդակությունը, էությունը,

Կկարողանա՝ վերլուծել մագիստրոսական թեզի կոնկրետ թեմայի բովանդակությունը և նպատակը, ընտրել իր կատարած հետազոտության մեթոդները, հիմնավորել արդիկանությունը, ձևակերպել հետազոտության առարկան ու օբյեկտը, նպատակը, խնդիրները, վարկածը, նորույթը:

Կտիրապետի՝ հետազոտության թեմայի առանձնահատկություններից ելնելով՝ հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները հիմնավորելու և հետազոտության համար անհրաժեշտ ու առավել նպատակահարմար մեթոդներ ընտրելու հմտություններին:

Բովանդակությունը. Թեմա 1. Հետազոտության մեթոդաբանության էությունը: **Թեմա 2**. Հետազոտության սկզբունքներն ու հիմնախնդիրը (պրոբլեմը): **Թեմա 3**. Հետազոտության վարկածի և հայեցակարգի մշակումը: **Թեմա 4**. Մագիստրոսական թեզի հասկացությունը և կառուցվածքը: **Թեմա 5**. Գիտական ճանաչման մեթոդները հետազոտության մեջ:

11/Մ22- Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում – (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (14 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել գիտահետազոտական խնդիրների իրականացման, մասնագիտական գործունեության կառավարման ժամանակակից տեղեկատվական համակարգերը և տեղեկատվական տեխնոլոգիաները: Ուսումնասիրվում են տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեսակները, ապահովող ենթահամակարգերը, կառուցվածքային և ֆունցիոնալ առանձնահատկությունները, մասնագիտական գործունեության բնագավառներում դրանց կիրառությունները: Դիտարկվում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպման տեղեկատվական տեխնոլոգիաները, անդրադարձ է կատարվում ամպային (cloud) տեխնոլոգիաներին և ծառայություններին: Կազմակերպվում են գործնական աշխատանքներ՝ ամպային տեխնոլոգիաների, MS Office Word , Power Point խմբագրիչների կիրառմամբ, առցանց ֆայլերի ստեղծման և խմբագրման, համատեղ օգագործման, Unicode և ANSI տեսքտերի փոխարկման, փաստաղթերի համեմատման, պաշտպանության, ցուցադրումներում կաղապարների կիրառման, առցանց ռեսուրսներով ժամանակից դիզայնով բովանդակային տարրերի պատրաստման և օգտագործման վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական կիրառություններից օգտվելու առանձնահատկությունները՝ մասնագիտական հետազոտության ոլորտում կիարռելու համար:

Կկարողանա՝ աշխատել տեքստի, գրաֆիկական օբյեկտների, աղյուսակների հետ, մշակել հոդվածները, գիտական աշխատությունները և այլ փաստաթղթերը, աշխատել էլեկտրոնային աղյուսակների հետ, կազմել դիագրամներ և գրաֆիկներ, կատարել հաշվարկներ, նախագծել և ստեղծել տվյալների բազա, ստեղծել հարցումներ, ձևեր, հաշվետվություններ,

Կտիրապետի՝ տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային) օգտվելու, զեկուցումների, հետազոտությունների արդյունքները ներկայացնելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. MS Word տեքստային խմբագրիչ: **Թեմա 2.** MS Power Point ցուցադրությունների պատրաստման տեխնոլոգիա: **Թեմա 3.** Տեղեկատվական համակարգեր: **Թեմա 4.** Տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS): **Թեմա 5.** Տեղեկատվական հասարակություն:

3. Մասնագիտացված պատրաստման դասընթացներ

1.1 Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

21/Մ9-Իրավունքի փիլիսոփայություն– (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (56 ժամ, 40 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

‹‹Իրավունքի փիլիսոփայություն›› դասընթացի նպատակն է ուսանողների շրջանում ձևավորել իրավունքի էության փիլիսոփայական հիմքերի վերաբերյալ անհրաժեշտ իմացություն: Դասընթացն ունի ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական խոր գիտելիքների ապահովման, իրավահասկացողության փիլիսոփայական սահմանման, իրավական օնթոլոգիայի (գոյաբանության), աքսիոլոգիայի (արժեբանության), գնոսեոլոգիայի (իմացաբանության) բացահայտման ուղղվածություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ իրավունքի փիլիսոփայության ուսումնասիրման առարկան և մեթոդները, իրավահասկացողության տիպաբանությունը, իրավական արժեբանության հասկացությունը, իրավական ճանաչողության հիմունքները, իրավունքի փիլիսոփայական ընկալումները հայ իրավական մտքի պատմության մեջ:

Կկարողանա՝ վերլուծել իրավունքի անտիկ փիլիսոփայության հիմնարար դրույթները, բնութագրել արդարության և իրավունքի ընկալումները հին հունական և հռոմեական քաղաքակրթական համակարգում, բացահայտել միջնադարյան իրավունքի փիլիսոփայության հիմնական առանձնահատկությունները, բնորոշել նոր և նորագույն ժամանակների իրավունքի փիլիսոփայության հիմնական միտումները, բնութագրել բնական իրավունքի հայեցակարգը:

Կտիրապետի՝ հիմնական իրավափիլիսոփայական հայեցակարգերին, բնական իրավունքի հայեցակարգին, իրավունքի էկզիստենցիալ փիլիսոփայության հիմունքներին, իրավունքի պոզիտիվիստական և նեոպոզիտիվիստական ուսմունքներին, Հանս Քելզենի «մաքուր» իրավունքի ուսմունքին, իրավահասկացողության հիմնական ուղղությունների վերլուծության մեթոդներին, հայ իրավական մտքի պատմության մեջ իրավունքի փիլիսոփայական ընկալումներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Իրավունքի փիլիսոփայության ուսումնասիրման առարկան և մեթոդները : **Թեմա 2.** Իրավական օնթոլոգիա, աքսիոլոգիա և գնոսեոլոգիա: **Թեմա 3.** Իրավական պետությունը և մարդու իրավունքներն ու ազատությունները: **Թեմա 4.** Իրավունքի փիլիսոփայական ըմբռնումը: **Թեմա 5.** Իրավունքի փիլիսոփայությունը անտիկ աշխարհում: **Թեմա 6.** Իրավունքի փիլիսոփայությունը միջնադարում: **Թեմա 7.** Իրավունքի փիլիսոփայությունը նոր ժամանակներում: **Թեմա 8.** Ժան-Ժակ Ռուսոյի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեմա 9.** Էմանուել Կանտի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեմա 10.** Հեգելի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեմա 11.** Իրավունքի փիլիսոփայական ընկալումները հայ իրավական մտքի պատմության մեջ: **Թեմա 12.** Իրավունքի փիլիսոփայությունը Ռուսաստանում, Բ. Ն. Չիչերինի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեմա 13.** Պ. Հ. Նովգորոդցևի, Վ. Ս. Սոլովյովի և Ն. Ա. Բերդյաևի իրավափիլիսոփայական հայացքները: **Թեմա 14.** Իրավունքի փիլիսոփայությունը 20-րդ դարում և 21-րդ դարի սկզբին. հիմնական հայեցակարգերը:

21/Մ15 – Պետության և իրավունքի արդի հիմնահարցեր - (6 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (56 ժամ, 40 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել պետության և իրավունքի արդի հիմնահարցերի մասին բազմակողմանի իմացություն, խորացնել ուսանողների գիտելիքները հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտների իրավական կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ:

«Պետության և իրավունքի արդի հիմնահարցեր» դասընթացի շրջանակում քննարկվում են իրավական կարգավորման, իրավաբանական վարույթի իրականացման, իրավունքի կիրառման խնդիրները, իրավաբանական (օրենսդրական) տեխնիկայի կանոնները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ արդի պետության և իրավունքի փոխկապվածությունը հասարակության տնտեսական, քաղաքական համակարգերին, պետության և իրավունքի հարաբերակցությունը, սահմանադրական, վարչական, ֆինանսական, քաղաքացիական, քրեական, դատավարական և այլ հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները:

Կկարողանա՝ վերլուծել աշխատանքային, ընտանեկան, բնապահպանական ոլորտների իրավական կարգավորման հիքերն ու կառուցակարգերը, ներկայացնել իրավական վարույթի տեսակներն ու փուլերը, իրավունքի իրացման ձևերը, իրավունքի կիրառման նշանակությունը իրավունքի իրացման համակարգում:

Կտիրապետի՝ արդի ազգային (ներպետական) իրավունքի ճյուղերի և միջազգային իրավունքի հիմունքներին, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մեթոդներին, իրավաբանական վարույթի, իրավունքի իրացման և կիրառման կառուցակարգերին, իրավաբանական (օրենսդրական) տեխնիկայի կանոններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. ‹‹Պետության և իրավունքի արդի հիմնահարցեր›› դասընթացի ուսումնասիրման առարկան, մեթոդները, նպատակներն ու խնդիրները: **Թեմա 2.** Արդի պետության և իրավունքի փոխկապվածությունն ու փոխգործակցությունը: **Թեմա 3.** Մարդու հիմնական իրավունքների հիմունքները: **Թեմա 4.** Արդի պետաիրավական համակարգը և տնտեսությունը: **Թեմա 5.** Պետությունը արդի հասարակության քաղաքական համակարգում: **Թեմա 6.** Արդի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ձևերը: **Թեմա 7.** Իրավաբանական վարույթի տեսակները, փուլերը և սկզբունքները: **Թեմա 8.** Սահմանադրական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցերը: **Թեմա 9.**Վարչական հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները: **Թեմա 10.** Ֆինանսական հարաբերությունների իրավակարգավորման հիմունքները: **Թեմա 11.** Քաղաքացիական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցերը: **Թեմա 12.** Քաղաքացիական դատավարության օրենսդրական հիմքերը: **Թեմա 13.** Աշխատանքային հարաբերությունների իրավակարգավորման հիմնահարցերը: **Թեմա 14.** Ընտանեկան հարաբերությունների

օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները: **Թեմա 15.** Քրեական իրավահարաբերությունների առանձնահատկությունները: **Թեմա 16.** Քրեական դատավարության օրենսդրական հիմունքները: **Թեմա 17.** Բնապահպանական իրավունքի արդի հիմնահարցերը: **Թեմա 18.** Միջազգային հարաբերությունների իրավական կարգավորման հիմունքները: **Թեմա 19.** Իրավակիրառումը իրավունքի իրացման համակարգում: **Թեմա 20.** Իրավաբանական (օրենսդրական) տեխնիկայի կանոնները:

21/Մ16-Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները–(4 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է սովորողների մոտ սահմանադրական պատասխանատվության՝ որպես իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակի, սահմանադրահիրավական առանձին ինստիտուտի, իշխանությունների բաժանման, «զսպումների և հակակշիռների» համակարգի անհրաժեշտ տարրի վերաբերյալ բազմակողմանի իմացության ապահովմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ սոցիալական պատասխանատվության էությունը և դրսևորման ձևերը, բարոյական, քաղաքական և իրավաբանական պատասխանատվության առանձնահատկությունները, իրավաբանական պատասխանատվության տեսակները, սահմանադրական պատասխանատվության նշանակությունը, սկզբունքները և նպատակները, սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի հիմնարար դրույթները, սահմանադրական պատասխանատվության գործառույթները, սահմանադրական պատասխանատվության միջոցները:

Կկարողանա՝ վերլուծել սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի ձևավորման փուլերը, բնութագրել սահմանադրական պատասխանատվության կամավոր (պոզիտիվ) և հարկադրական (նեգատիվ, ռետրոսպեկտիվ) ասպեկտները, տարբերել սահմանադրական պատասխանատվությունը քաղաքական պատասխանատվությունից, վերլուծել ՀՀ Սահմանադրությունը՝ որպես սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի նորմատիվ հիմք, մեկնաբանել սահմանադրական պատասխանատվության օրենսդրական աղբյուրները ՀՀ-ում, բացահայտել սահմանադրական

պատասխանատվության փաստական հիմքը, վերլուծել սահմանադրական իրավախախտման կազմը:

Կտիրապետի՝ հարկադրական նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման կառուցակարգերին, սահմանադրական պատասխանատվության սուբյեկտների սահմանադրաիրավական կարգավիճակի տարրերին, ՀՀ Ազգային ժողովի սահմանադրական պատասխանատվության միջոցներին, ՀՀ Կառավարության սահմանադրական պատասխանատվության հիմքերին, ՀՀ նախագահի սահմանադրական պատասխանատվության հիմքերին, սահմանադրական պատասխանատվության կիրառման կառուցակարգում ՀՀ Սահմանադրական դատարանի գործառույթներին, ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի զարգացման միտումներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սոցիալական պատասխանատվության հասկացությունը, տեսակները և դրա նշանակությունը: **Թեմա 2.** Սահմանադրական պատասխանատվությունը որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ: **Թեմա 3.** Սահմանադրական պատասխանատվության կամավոր (պոզիտիվ) և հարկադրական (նեգատիվ) ասպեկտները: **Թեմա 4.** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ: **Թեմա 5.** ՀՀ Կառավարությունը որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ: **Թեմա 6.** Հայաստանի Հանրապետության նախագահը որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ: **Թեմա 7.** ՀՀ Սահմանադրական դատարանի դերակատարությունը սահմանադրական պատասխանատվության կիրառման կառուցակարգում:

21/Մ3 Ընտրական իրավունք (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

‹‹Ընտրական իրավունք›› դասընթացի նպատակն է սովորողներին խոր գիտելիքներ հաղորդել ընտրական իրավունքի նշանակության, ընտրությունների՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության կարևոր ինստիտուտի ծագման և զարգացման պատմության,

համապետական և տեղական ընտրությունների անցկացման սկզբունքների և կարգի վերաբերյալ:

Դասընթացը հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն ուսումնասիրել ընտրական իրավունքի կարգավորման առարկան ու մեթոդները, ընտրական իրավունքի սկզբունքները, ընտրական իրավահարաբերությունները, դրանց սուբյեկտների սահմանդրաիրավական կարգավիճակը, ընտրությունների տեսակները, համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ակզբունքներն ու կարգը:

Դասընթացի ուսումնասիրման առարկան ներառում է ընտրահամակարգերի տեսակները և դրանց առանձնահատկությունները, ՀՀ-ում ընտրական հանձնաժողովների ձևավորման կարգն ու գործառույթները:

Դասընթացը ներառված է «Իրավագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրում և հիմնված է «Սահմանադրական իրավունք» բակալավրիատի և «Պառլամենտարիզմ և պառլամենտական իրավունք» մագիստրոսական դասընթացների վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ընտրական իրավունքի հասկացությունը և նշանակությունը, ընտրական իրավունքի կարգավորման առարկան և մեթոդները, ՀՀ ընտրական իրավունքի աղբյուրներն ու սկզբունքները, ընտրակարգերի տեսակները, համապետական և տեղական ընտրությունների կազմակերպման կարգն ու սկզբունքները, ՀՀ-ում ընտրական հանձնաժողովների գործունեության կառուցակարգերը, ՀՀ գործող ընտրական իրավունքի համակարգը, վերջինիս հիմնական կառուցվածքային տարրերը, ՀՀ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների նախընտրական քարոզչության և ընտրությունների առանձնահատկությունների մասին:

Կկարողա՝ ներկայացնել համապետական և տեղական ընտրությունների նշանակությունն ու առանձնահատկությունները, բացահայտել ընտրական իրավունքի կարգավորման առարկան, տարբերակել ընտրական իրավունքի կարգավորման մեթոդները, բնութագրել ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտներին, վերլուծել ընտրական իրավունքի և իրավունքի մյուս ճյուղերի փոխադարձ կապերը, ներկայացնել ՀՀ-ում ընտրական գործընթացի փուլերը:

Կտիրապետի՝ ընտրությունների՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության կարևոր ինստիտուտի հիմունքներին, համամասնական, մեծամասնական և խառը ընտրակարգերի առանձնահատկություններին, համապետական և տեղական ընտրությունների կազմակերպման սկզբունքներին, ընտրական հանձնաժողովների կազմակերպման ու

գործունեության կարգին, ընտրական իրավունքի աղբյուրներին, ՀՀ-ում ընտրական իրավախախտումների կազմին և դրանց համար պատասխանատվության միջոցներին:

Բովանդակություն

Թեմա 1. Ընտրական իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան և մեթոդները: **Թեմա** 2. Ընտրությունների հասկացությունը և իրավաքաղաքական նշանակությունը: **Թեմա** 3. ՀՀ ընտրական իրավունքի սահմանադրական բնութագիրը և սկզբունքները: **Թեմա** 4. Ընտրական համակարգի հիմնական տեսակները: **Թեմա** 5. ՀՀ-ում ընտրական հանձնաժողովների համակարգը, գործառույթները: **Թեմա** 6. Ընտրությունների կազմակերպման և անցկացման ֆինանսավորումը ՀՀ-ում: **Թեմա** 7. Ընտրական գործընթացի փուլերը ՀՀ-ում: **Թեմա** 8. Քվեարկության կազմակերպումը, քվեարկության անցկացման կարգը: **Թեմա** 9. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելու կարգը: **Թեմա 10** . Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները: **Թեմա 11.** ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի կարգավիճակը: **Թեմա 12.** Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի ընտրությունները: **Թեմա 13.** Դիտորդների, վստահված անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և լիազոր ներկայացուցիչների կարգավիճակը: **Թեմա 14..** Ընտրական իրավախախտումները և դրանց համար նախատեսված պատասխանատվության ու պատժի միջոցները ՀՀ-ում:

21/Մ8 – Իրավունքի սոցիոլոգիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի հումանիտար, ընդհանուր փիլիսոփայական, իրավագիտական և սոցիոլոգիական ուղղվածություն: Դասընթացի նպատակն է արդի իրավունքի սոցիոլոգիայի հիմնարար հասկացությունների բացահայտումը: Դասընթացը ներառված է իրավունքի ընդհանուր փիլիսոփայական ուսումնասիրման համակարգում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ հասարակական հարաբերությունների սոցիալ-իրավական կարգավորման կառուցակարգի բաղադրիչները, իրավաստեղծման սոցիոլոգիական ապահովման սկզբունքները, իրավունքի սոցիոլոգիական իմաստավորման հիմունքները:

Կկարողանա՝ բացահայտել իրավաստեղծման և իրավակիրառ գործունեության սոցիոլոգիական ասպեկտները, կիրառել սոցիալ-իրավական հետազոտությունների մեթոդները, դիտարկել իրավունքը՝ որպես սոցիալական վերահսկողության գործիք:

Կտիրապետի՝ իրավական կոնֆլիկտոլոգիայի /բախումնաբանության/ հիմունքներին, իրավունքի և սոցիալական համակարգի այլ կարգավորիչների փոխհարաբերությունների հիմունքներին, իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորիչի առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Իրավունքի սոցիոլոգիայի հասկացությունը: **Թեմա 2.** Իրավունքի սոցիոլոգիայի պատմությունը: **Թեմա 3**. Իրավական կարգավորման սոցիոլոգիական մեխանիզմը: **Թեմա 4.** Անձի իրավական սոցիալականացումը (սոցիալիզացիան): **Թեմա 5.** Իրավաստեղծման սոցիոլոգիական ապահովումը: **Թեմա 6.** Իրավաբանական գործունեություն: **Թեմա 7.** Ազգաբնակչության իրավական տեղեկատվության ապահովման սոցիոլոգիա: **Թեմա 8.** Իրավակիրառման սոցիոլոգիա: **Թեմա 9.** Իրավաբանական կոնֆլիկտոլոգիա (բախումնաբանություն): **Թեմա 10.** Սոցիալ-իրավական վերահսկողություն: **Թեմա 11.** Սոցիալ-իրավական հետազոտությունների տեսակները և հասկացությունը: **Թեմա 12.** Իրավական կանխատեսում (պրոգնոզ): **Թեմա 13.** Իրավական նորմերի էֆեկտիվության ուսումնասիրությունը:

21/Մ10– Համեմատական իրավագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել արդի աշխարհի իրավական քարտեզը, կատարել հիմնական իրավական համակարգերի համեմատական ուսումնասիրություն և վերլուծություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ արդի իրավական համակարգերի առանձնահատկությունները, իրավունքի հիմնական ընտանիքների ձևավորման պատմությունը, իրավական համակարգերի պատմական և արդի աղբյուրները, ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի և Ճապոնիայի իրավական համակարգերի առանձնահատկությունները:

Կկարողանա՝ դասակարգել իրավական համակարգերը, բացահայտել իրավական յուրաքանչյուր համակարգին բնորոշ օրինաչափությունները, օգտագործել արտասահմանյան իրավական փորձը:

Կտիրապետի՝ ռոմանագերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերի տարբերակման հիմունքներին, սոցիալիստական և հետսոցիալիստական իրավական համակարգերի առանձնահատկություններին, ավանդական, հրեական, իսլամական և այլ իրավական համակարգերին բնորոշ օրինաչափություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Համեմատական իրավունքի հասկացությունը: **Թեմա 2.** Համեմատական իրավունքի պատմությունը: **Թեմա 3.** Համեմատական իրավունքի մեթոդոլոգիան: **Թեմա 4.** Համեմատական իրավունքի գործառույթները (ֆունկցիաները): **Թեմա 5.** Ժամանակակից իրավական համակարգերի (սիստեմների) դասակարգումը: **Թեմա 6.** Համեմատական իրավունք և միջազգային իրավունք: **Թեմա 7.** Ռոմանագերմանական իրավունքի ընտանիք: **Թեմա 8.** ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի, Ճապոնիայի իրավական համակարգերը: **Թեմա 9.** Ընդհանուր իրավունքի և սկանդինավյան երկրների իրավական համակարգը: **Թեմա 10.** Մուսուլմանական իրավունքի ընտանիքը: **Թեմա 11.** Մուսուլմանական իրավական համակարգերը /դպրոցները կամ մազիաբները/: **Թեմա 12.** ՀՀ իրավական համակարգը և իրավական համակարգերը:

21/Մ6 Իրավունքի արժեբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի ընդհանուր փիլիսոփայական և, մասնավորապես, արժեբանական (աքսիոլոգիական) ու իրավագիտական ուղղվածություն: Դասընթացի նպատակն է իրավունքը ներկայացնել որպես արժեք, իրավական ինստիտուտները դիտարկել

արժեբանական տեսանկյունից: Դասընթացը հիմնվում է իրավունքի փիլիսոփայության, աքսիոլոգիայի, ընդհանուր տեսական-պատմական իրավաբանական գիտակարգերի վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ իրավունքի արժեբանական իմաստավորման հիմունքները, իրավունքի գիտական ճանաչողության արժեբանական մեթոդները, իրավական գնոսեոլոգիայի /իմացաբանության/ հիմունքները, քրիստոնեական և ոչ քրիստոնեական իրավունքի համակարգերի արժեբանական հատկանիշները:

Կկարողանա՝ իրավունքը գնահատել արժեբանական (աքսիոլոգիական) տեսանկյունից, իրավունքը բացահայտել օնթոլոգիայի (գոյաբանության) դիտանկյունից, իրավունքը ներկայացնել իրավական պոզիտիվիզմի և դոգմատիզմի տեսանկյուններից:

Կտիրապետի՝ իրավունքի աքսիոլոգիական հայեցակարգին, իրավունքի ուսումնասիրման սինթեզող, արժեբանական-կողմնորոշիչ մեթոդներին, իրավական-արժեբանական մտածողության հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Իրավունքի արժեբանության փիլիսոփայական-իրավական ակունքները: Հ. Լոտցի, Հ. Ռիկկերտի արժեբանական (աքսիոլոգիական) ուսմունքները: **Թեմա 2.** Վ. Վինդելբանդի, Է. Հարտմանի և այլոց արժեբանական տեսությունները: **Թեմա 3.** Վ.Պ. Տուգարենովի արժեբանական ուսմունքը: **Թեմա 4.** Ս. Ս. Ալեքսեևի իրավունքի արժեբանությունը: **Թեմա 5.** Ն. Նենովսկու իրավունքի արժեբանությունը: **Թեմա 6.** Վ. Ս. Ներսիսյանցի իրավունքի արժեբանությունը: **Թեմա 7.** Իրավունքի արժեբանական հիմնավորումը և իրավունքի բովանդակության գլխավոր, արժեքավոր հատկությունները ըստ Ս. Խաչատրյանի Բնական-արժեբանական տեսության: **Թեմա 8.** Իրավունքի արժեբանական հենքը և կառուցվածքը: **Թեմա 9.** Իրավունքի ընդերքում գործող բնական օրենքները: Քրիստոնեական և ոչ քրիստոնեական իրավունք: **Թեմա 10.** Իրավունքի ներքին էական, օբյեկտիվ հատկությունների բնութագիրը: **Թեմա 11.** Իրավունքի նորմատիվության, որոշակիության, համապարտադրականության, համակարգվածության հատկությունները: **Թեմա 12.** Իրավունքի նպատակահարմարության, անհրաժեշտության, էֆեկտիվության և այլ հատկությունները: **Թեմա 13.** Իրավունքի արժեքավոր և անհրաժեշտ հատկությունները և դրանց կապը արժեքների աշխարհի հետ: Իրավունքի ներքին հատկությունները՝ որպես իրավական արժեքների ձևավորման հիմք:

21/Մ14- Պառլամենտարիզմ և պառլամենտական իրավունք (6 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (56 ժամ, 40 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

«Պառլամենտարիզմ և պառլամենտական իրավունք» դասընթացի նպատակն է պառլամենտարիզմի հասկացության, էության, պառլամենտական իրավունքի՝ որպես իրավունքի հարաբերականորեն ինքնուրույն ճյուղի հիմնական հատկանիշների, կարգավորման առարկայի և մեթոդների, սկզբունքների, զարգացման առկա վիճակի և զարգացման միտումների ուսումնասիրությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ պառլամենտարիզմի հասկացությունը և էությունը, պառլամենտարիզմի ձևավորման նախադրյալներն ու անհրաժեշտ գործոնները, պառլամենտական իրավունքի աղբյուրները, պառլամենտական իրավունքի ձևավորման փուլերը, Հայաստանի պառլամենտի ընտրության կարգը, ՀՀ Ազգային ժողովի գործունեության հիմունքները:

Կկարողանա՝ ներկայացնել պառլամենտարիզմի նշանակությունը, բացահայտել պառլամենտական իրավունքի կարգավորման առարկան, տարբերակել պառլամենտական իրավունքի կարգավորման մեթոդները, բնութագրել պառլամենտական իրավունքի կարգավորիչ, պահպանիչ, իմացաբանական-տեղեկատվական և այլ գործառույթները, վերլուծել պառլամենտական իրավունքի և իրավունքի մյուս ճյուղերի փոխադարձ կապերը:

Կտիրապետի՝ պառլամենտարիզմի տեսամեթոդաբանական հիմունքներին, օրինաստեղծ աշխատանքի սկզբունքներին, պառլամենտական մարմինների ձևավորման ընթացակարգերին, պառլամենտի աշխատակազմում պետական ծառայության հիմունքներին, ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացման հիմնական միտումներին, ՀՀ պառլամենտական իրավունքի զարգացման հիմնական ուղություններին:

Բովանդակությունը.

Ներածություն: Թեմա 1. Պառլամենտական իրավունքի հասկացությունը, պառլամենտի և պառլամենտարիզմի ձևավորման տեսամեթոդաբանական հիմունքները: **Թեմա 2.** Պառլամենտարիզմի ձևավորման ու զարգացման փուլերը: **Թեմա 3.** Պառլամենտի

ընտրության և գործունեության օրենսդրական ու գործնական հիմնախնդիրները: **Թեմա 4.** ՀՀ Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր, ներկայացուցչական մարմին: **Թեմա 5.** ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրական կարգավիճակը: **Թեմա 6.** ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողովները: **Թեմա 7.** Կանանց մասնակցությունը պառլամենտական գործունեությանը **Թեմա 8**. Պառլամենտը որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ:

21/Մ18–Քաղաքացիության ինստիտուտի ներպետական և միջազգային իրավական ասպեկտները (6 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (46 ժամ, 30 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել քաղաքացիությունը՝ որպես սոցիալ-իրավական երևույթ, ապահովել գիտելիքներ քաղաքացիության, երկքաղաքացիության, բազմաքաղաքացիության ինստիտուտների, քաղաքացիության ներպետական և միջազգային իրավական ասպեկտների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ քաղաքացիության ձևավորման պատմական պայմանները և սոցիալական նախադրյալները, քաղաքացիության ինստիտուտի նպատակներն ու գործառույթները, քաղաքացիության ձեռբերման հիմքերը, քաղաքացիության դադարեցման հիմքերը, քաղաքացիության ներպետական և միջազգային-իրավական կազմավորման հիմունքները, երկքաղաքացիության և բազմաքաղաքացիության առանձնահատկությունները:

Կկարողանա՝ վերլուծել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի դրույթները, մեկնաբանել ՀՀ քաղաքացիության սահմանադրահիրավական հիմքերը, բնութագրել քաղաքացիության, երկքաղաքացիության և բազմաքաղաքացիության միջազգային-իրավական ասպեկտները, բացահայտել քաղաքացու, երկքաղաքացու, բազմաքաղաքացու իրավական կարգավիճակի տարրերը, կատարել քաղաքացիության ինստիտուտի պատմական վերլուծություն՝ հին աշխարհում, միջնադարում, նոր և նորագույն ժամանակաշրջաններում, բնութագրել քաղաքացիությունը Հայաստանի առաջին, երկրորդ և երրորդ հանրապետություններում:

Կտիրապետի՝ քաղաքացիության ձեռքբերման հիմքերին ու միջոցներին, քաղաքացիության դադարեցման հիմքերին, քաղաքացիության փոփոխության իրավական և փաստական ձևերին, երկքաղաքացու և բազմաքաղաքացու իրավական կարգավիճակի հիմունքներին, քաղաքացիության հիմնախնդիրներին տարածքային փոփոխությունների դեպքում, Եվրոպայի տարածքում և աշխարհում քաղաքացիության հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

Ներածություն: Թեմա 1. Քաղաքացիությունը որպես սոցիալ-իրավական ինստիտուտ: **Թեմա 2.** Քաղաքացիության ինստիտուտի կայացման պատմական պայմանները և զարգացման սոցիալական նախադրյալները: **Թեմա 3.** Քաղաքացիության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում: **Թեմա 4.** Քաղաքացիության ներպետական և միջազգային-իրավական հիմքերի հարաբերակցությունը: **Թեմա 5.** Երկքաղաքացիության և բազմաքաղաքացիության ժամանակակից հիմնախնդիրները: **Թեմա 6.** Երկքաղաքացիության միջազգային-իրավական սկզբունքները **Թեմա 7**. Երկքաղաքացիության հարցերի միջազգային իրավական կարգավորումը: **Թեմա 8.** Եվրոպայի Խորհրդի գործունեությունը քաղաքացիության ոլորտում և դրա միջազգային-իրավական ներգործությունը: **Թեմա 9.** Քաղաքացիության և երկքաղաքացիության խնդիրները տարածքային փոփոխության դեպքում և դրանց իրավական կարգավորումը: **Թեմա 10.** Երկքաղաքացիության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում:

21/Մ1 Դատական գործերի վերանայման վարույթի հիմնախնդիրները (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների համակողմանի պատկերացում տալ դատական վերանայման քրեադատավարական, քաղաքացիադատավարական և վարչադատավարական համակարգերի՝ որպես ամբողջական իրավական կառուցակարգերի, ինչպես նաև դրանց առանձին տարրերի (վերաքննություն, վճռաբեկություն, բացառիկ վերանայում) մասին և ծանոթացնել ՀՀ-ում քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության կարգով ընդունված դատական ակտերի վերանայման ընթացակարգերին և առկա հիմնախնդիրներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ՀՀ դատական վերանայման քրեադատավարական, քաղաքացիադատավարական և վարչադատավարական համակարգերերը և դրանց տարրերը՝ պատմահրավական, իրավահամեմատական, իրավամշակութային, իրավակիրառական և իրավապաշտպանական համատեքստերում, դատական ակտերի վերանայման հիմնական ձևերը և ընթացակարգերը, դատական ակտեր վերանայող դատական օղակների հիմնական խնդիրները:

Կկարողանա՝ լուծել գործնական խնդիրներ, կազմել դատավարական փաստաթղթեր, մասնակցել դատավարությունների, նախագծել դատական վերանայման համակարգեր և ինստիտուտներ, գնահատել դրանց արդյունավետությունը, մշակել հիմնավորված առաջարկներ՝ ուղղված դատական ակտերի վերանայման կատարելագործմանը:

Կտիրապետի՝ համապատասխան օրենսդրությանը, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Դատական ակտերի վերանայման հասկացությունը: **Թեմա 2.** Դատական վերանայման իրավական ինստիտուտի էությունը, ծագումը և զարգացումը: **Թեմա 3.** Դատական վերանայման տեսությունը: **Թեմա 4.** Դատական ակտերի վերանայման հիմնական ձևերը: **Թեմա 5.** Դատական ակտերի վերանայումը վերաքննության կարգով: **Թեմա 6.** Դատական ակտերի վերանայումը վճռաբեկության կարգով: **Թեմա 7.** Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած հանգամանքներով: **Թեմա 8.** Դատական ակտերի վերանայումը նոր հանգամանքներով: **Թեմա 9.** Արդարադատության բուն էության խաթարման հիմքով դատական ակտերի վերանայումը: **Թեմա 10.** Արդարադատության բուն էության խաթարման հիմքով դատական ակտերի վերանայման կարգը /ընթացակարգը/: **Թեմա 11.** Բացառիկ վերանայման վարույթը ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի:

21/Մ7 Իրավունքի բացերը և դրանց հաղթահարման հիմնախնդիրները (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակ է հետապնդում խորացնել գիտելիքները իրավակիրառ պրակտիկայում հանդիպող իրավունքի բացերի հաղթահարման վերաբերյալ: Դասընթացի ուսումնասիրման առարկան հանդիսանում է ՀՀ իրավական համակարգում առկա իրավունքի բացերը և դրանց լրացման ու բացառման համար համապատասխան մեխանիզմների մշակումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ իրավունքի բացերի հայտնաբերման եղանակները, դրանց առաջացման պատճառները և վերացման ուղիները՝ հետագայում իրավակիրառ պրակտիկայում արդյունավետ օգտագործելու համար:

Կկարողանա՝ լրացնել իրավական համակարգում առկա բացը, նպաստել իրավաստեղծ գործունեության ընթացքի կատարելագործմանը:

Կտիրապետի՝ իրավունքի բացերի հայտնաբերման, վերացման, հաղթահարման մեխանիզմներին՝ տեսության մեջ դրանց վերաբերյալ արտահայտված դիրքորոշումների ամբողջության ուսումնասիրման և վերլուծության միջոցով:

Բովանդակություն.

Թեմա 1. Դասընթացի ընդհանուր բնութագիրը և ընդհանուր նկարագիրը: **Թեմա 2.** Իրավունքի բացի հասկացությունը և տեսակները: **Թեմա 3.** Պոզիտիվ իրավունքում բացերի առաջացման պատճառները և հայտնաբերման եղանակները (մեթոդները): **Թեմա 4.** Իրավունքի բացերի լրացումը իրավակիրառ գործընթացում: **Թեմա 5.** Իրավունքի բացերի վերացումը նորմատիվ իրավական ակտերում: **Թեմա 6.** Իրավունքի բացերի վերացումը իրավաստեղծ գործունեության կատարելագործման եղանակով: **Թեմա 7.** Իրավունքի բացերի վերացումը իրավական կարգավորման մեխանիզմների բարելավման միջոցով: **Թեմա 8.** Իրավունքի բացերի լրացումը Սահմանադրական դատարանի իրավաստեղծ գործունեության շնորհիվ:

21/Մ13. Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ (3 կրեդիտ) Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մտավոր սեփականության հասկացությանը, մտավոր սեփականության իրավական կարգավորման ինստիտուտներին, արտոնագրային գործի առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ հեղինակային և արտոնագրային իրավունքով կարգավորվող հարաբերությունների առանձնահատկությունները, քաղաքացիական շրջանառության մասնակիցների ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների իրավական պահպանության կառուցակարգերը:

Կկարողանա՝ հասկանալ մտավոր սեփականության իրավունքի ոչ ավանդական օբյեկտների իրավական պահպանության առանձնահատկությունները, ներկայացնել մտավոր սեփականության իրավատերերի իրավունքները և դրանց կարգավորման առանձնահատկությունները, նկարագրել մտավոր սեփականության իրավունքներին առնչվող վեճերի լուծման հիմնական ձևերը:

Կտիրապետի՝ անբարեխիղճ մրցակցությունից մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մեխանիզմներին:

Բովանդակությունը. Թեմա 1. Մտավոր սեփականության հասկացությունը և իրավական կարգավորման համակարգը: **Թեմա 2-4.** Հեղինակային իրավունքի հիմնադրույթները: **Թեմա 5.** Հարակից իրավունքների պահպանությունը: **Թեմա 6.** Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը: **Թեմա 7-9.** Արտոնագրային իրավունքի հիմնադրույթները: **Թեմա 10.** Հեղինակների և արտոնագրատերերի իրավունքների իրականացման և պաշտպանության կարգը: **Թեմա 11.** Քաղաքացիական շրջանառության մասնակիցների ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների իրավական պահպանությունը: **Թեմա 12.** Մտավոր սեփականության իրավունքի ոչ ավանդական օբյեկտների իրավական պահպանությունը: **Թեմա 13.** Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը անբարեխիղճ մրցակցությունից: **Թեմա 14.** Հեղինակային և արդյունաբերական սեփականության իրավունքների կարգավորման առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում:

21/Մ27 Հանրային ծառայության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի սահմանադրաիրավական և վարչաիրավական ուղղվածություն: Դասընթացը հիմնվում է հանրային ծառայության ընդհանուր տեսական-մեթոդական հիմքերի վրա և վերաբերում է հանրային ծառայության սկզբունքներին, հանրային ծառայության անցնելու պահանջներին, հանրային պաշտոնների դասակարգմանը, հանրային ծառայողի հիմնական իրավունքներին և պարտականություններին, սոցիալական երաշխիքներին, պաշտոնների առանձնահատկություններին, բարեվարքության համակարգին, ինչպես նաև գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման հետ կապված հարաբերություններին: Դասընթացի նպատակն է ներկայացնել հանրային ծառայությունը որպես համալիր պետաիրավական ինստիտուտ՝ իր բոլոր ասպեկտներով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ հանրային ծառայության նպատակներն ու խնդիրները, սկզբունքները, հանրային ծառայողների իրավական կարգավիճակի հիմունքները:

Կկարողանա՝ դասակարգել հանրային ծառայության տեսակները, բացահայտել պետական իշխանության, պետական կառավարման և քաղաքացիական ծառայության համակարգի փոխհարաբերությունների հիմունքները, վերլուծել հանրային ծառայողների նշանակման, վերապատրաստման, ատեստավորման, առաջխաղացման կարգը:

Կտիրապետի՝ ՀՀ-ում հանրային ծառայության նորմատիվ իրավական հիմքերին, հանրային ծառայության կազմակերպական սկզբունքներին, հանրային ծառայողների պաշտոնների անձնագրերի հիմնական պահանջներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հանրային ծառայությունը որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, հասկացությունը, բովանդակությունը և նշանակությունը: **Թեմա 2.** Հանրային ծառայության իրավական հիմքերը: **Թեմա 3.** Հանրային ծառայության կառուցվածքը, տեսակները և հիմնական սկզբունքները: **Թեմա 4.** Պետական և համայնքային ծառայությունների

հարաբերակցությունը, խնդիրները և գործառույթները: **Թեմա 5.** Պետական և համայնքային ծառայողների սահմանադրաիրավական կարգավիճակը: **Թեմա 6.** Հանրային ծառայության պաշտոններ. հասկացությունը և դասակարգումը: Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատկությունները և պաշտոնից ազատելու հիմքերը: **Թեմա 7.** Հանրային ծառայության դասային աստիճաններն ու կոչումները որպես որակավորման չափանիշ: **Թեմա 8.** Հանրային ծառայողների վերապատրաստումը, ատեստավորումը և հանրային ծառայության կադրերի ռեզերվը: **Թեմա 9.** Քաղաքական և հայեցողական պաշտոնները, դրանց դասակարգումը: **Թեմա 10.** Հանրային ծառայողների իրավական վիճակը և երաշխիքները: **Թեմա 11.** Հանրային ծառայության կազմակերպման և ղեկավարման մարմինները: **Թեմա 12.** Բարեվարքության համակարգը. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները, անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը:

21/Մ17 Տեղեկատվական իրավունք (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

«Տեղեկատվական իրավունք» դասընթացի հիմնական նպատակն է ‹Իրավագիտություն›› մասնագիտության ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ խոսքի և մամուլի ազատության սահմանադրական երաշխիքների, ազատ արտահայտվելու ազգային ու միջազգային իրավական կարգավորման առանձնահատկությունների, խոսքի ազատության չարաշահման համար նախատեսվող պատասխանատվության, ինչպես նաև «տեղեկատվության ազատության» հասկացության և նշանակության, տեղեկություն ստանալու կարգի, պայմանների, իրավունքի խախտման բողոքարկման մեխանիզմների և իրավական պատասխանատվության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ պատասխանատու խոսքի արժեքը, արտահայտվելու ազատության էությունը և դրա իրավական երաշխիքները, խոսքի և մամուլի ազատության օրինական

սահմանափակումները և դրանց կիրառման հիմքերը, արտահայտվելու ազատության չարաշահման համար գոյություն ունեցող պատասխանատվությունը:

Կկարողանա՝ բացատրել և պրակտիկայում կիրառել տեղեկություն ստանալու՝ օրենքով սահմանված կարգը և պայմանները, իմանալ՝ ու՞մ և ինչպե՞ս պետք է դիմել անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու համար, բողոքարկել տեղեկատվություն անհիմն մերժումը՝ վերականգնելով իր խախտված իրավունքը, տեղեկատվություն ստանալու իրավունքը լավագույնս օգտագործել ընտրական գործընթացներում, ինքնուրույն առաջարկներ ներկայացնել ոլորտում առկա բացթողումները շտկելու վերաբերյալ:

Կտիրապետի՝ տեղեկատվության ազատության սահմանադրական երաշխիքներին, ազատ արտահայտվելու ազգային ու միջազգային իրավական կարգավորման առանձնահատկություններին, ոլորտում առկա հիմնախնդիրներին և դրանց լուծման կառուցակարգերին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տեղեկատվական իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան և հիմնական խնդիրները: **Թեմա 2.** Տեղեկատվական իրավունքի միջազգային ընկալումները: **Թեմա 3.** Տեղեկատվական իրավունքի հիմնական աղբյուրները: **Թեմա 4.** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները, դրանց նշանակությունը: **Թեմա 5.** Արտահայտվելու ազատության սահմանադրական երաշխիքները: **Թեմա 6.** Արտահայտվելու ազատության երաշխիքները միջազգային իրավական փաստաթղթերում: **Թեմա 7.** Տեղեկատվության ազատության ապահովման կառուցակարգերը: **Թեմա 8.** Տեղեկատվության տրամադրման գործընթացը: Տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու կարգն ու ժամկետները:

Թեմա 9. Տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը: **Թեմա 10.** Տեղեկատվության ազատության սահմանափակումների սպառիչ ցանկի սահմանումը: **Թեմա 11.** Տեղեկատվության ազատության պաշտպանության արևմտյան երկրների փորձը: **Թեմա 12.** Պետական գաղտնիքի հասկացությունը: **Թեմա 13.** Տեղեկատվության տրամադրումը ընտրական գործընթացներում: **Թեմա 14.** Տեղեկատվական իրավունքի զարգացման հեռանկարները:

4. Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

2101/Մ2 Դիվանագիտական և հյուպատոսական իրավունք (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել դիվանագիտական և հյուպատոսական իրավունքը՝ որպես միջազգային հանրային իրավունքի կարևոր ճյուղերից մեկը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հասկացությունն ու էությունը, դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի աղբյուրները, դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հիմնական ինստիտուտները, դիվանագիտական ծառայության կարգավորման հիմքերը, հյուպատոսների հիմնական խնդիրներն ու գործառույթները:

Կկարողանա՝ բացահայտել դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների կառուցվածքը, բնութագրել դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների սուբյեկտներին, ներկայացնել արտաքին հարաբերությունների ներպետական և արտասահմանյան մարմինների կազմակերպման ու գործունեության կարգը:

Կտիրապետի՝ դիվանագիտական և հյուպատոսական արարողակարգերի առանձնահատկություններին, դիվանագիտական և հյուպատոսական կարգավիճակի առանձնահատկություններին ու ներկայացվող պահանջներին, դիվանագիտական և հյուպատոսական արտոնությունների ու անձեռնմխելիության (իմունիտետի) հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Դիվանագիտական ու հյուպատոսական իրավունք» դասընթացի առարկան, խնդիրները և մեթոդը: **Թեմա 2**. Դիվանագիտությունը և դիվանագիտական ծառայությունը, հասկացությունը, էությունն ու նշանակությունը: **Թեմա 3.** Դիվանագիտական իրավունքի հասկացությունը, համակարգը և աղբյուրները: **Թեմա 4.** Արտաքին հարաբերությունների պետական մարմինների խնդիրները, գործառույթները, կազմակերպման ու գործունեության կարգը: **Թեմա 5.** Դիվանագիտական ներկայացուցչությունները, կառուցվածքը, անձնակազմը, խնդիրները և լիազորությունները: **Թեմա 6.** Դիվանագիտական անձեռնմխելիությունը և արտոնությունները: **Թեմա 7**. Դիվանագիտական ծառայության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 8.** Հյուպատոսական իրավունքի հասկացությունը, համակարգը և աղբյուրները: **Թեմա 9.** Հյուպատոսական հիմնարկների ու հաստատությունների տեսակները, խնդիրներն ու գործառույթները, նրանց

անձնակազմի անձեռնմխելիությունը և արտոնությունները: **Թեմա 10.** Հյուպատոսական ծառայության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում:

21/Մ12 Միջազգային պայմանագրային իրավունք (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել միջազգային պայմանագրի՝ որպես միջազգային իրավունքի հիմնական աղբյուրի առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ միջազգային պայմանագրի իրավաբանական բնույթն ու նշանակությունը, միջազգային պայմանագրի կնքման, ուժի մեջ մտնելու ու գործողության դադարման առանձնահատկությունները, միջազգային պայմանագրի ապահովման եղանակներն ու միջոցները:

Կկարողանա՝ դասակարգել միջազգային պայմանագրերը, բնորոշել միջազգային պայմանագրերի օբյեկտներն ու նպատակները, վերլուծել միջազգային պայմանագրերի կառուցվածքը, գործողության ժամկետները:

Կտիրապետի՝ միջազգային պայմանագրային իրավունքի ձևավորման հիմքերին ու զարգացման նախադրյալներին, միջազգային պայմանագրերի մեկնաբանման մեթոդներին, միջազգային պայմանագրերի գրանցման և հրապարակման կառուցակարգերին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Միջազգային պայմանագրերի հասկացությունը և իրավաբանական բնույթը: **Թեմա 2**. Միջազգային պայմանագրերի օբյեկտը, նպատակը և կողմերը: **Թեմա 3.** Միջազգային պայմանագրերի տեսակները և անվանումը: **Թեմա 4.** Միջազգային պայմանագրերի կառուցվածքը և ձևերը: **Թեմա 5.** Միջազգային պայմանագրեր կնքելու իրավունքը: **Թեմա 6.** Միջազգային պայմանագրերի տեքստերի նախապատրաստումը, ընդունումը և լեզուն: **Թեմա 7.** Միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու իրավաբանական հիմքերը, գրանցումը և հրապարակումը: **Թեմա 8.** Միջազգային պայմանագիրը և 3-րդ պետությունը: **Թեմա 9.** Միջազգային պայմանագրերի կատարման ապահովումը: **Թեմա 10.** Միջազգային

պայմանագրերի կատարման ապահովման միջոցները և եղանակները: **Թեմա 11.** Միջազգային պայմանագրերի մեկնաբանման հասկացությունը և տեսակները: **Թեմա 12.** Միջազգային պայմանագրերի մեկնաբանման եղանակները: **Թեմա 13.** Միջազգային պայմանագրերի անվավերության դադարեցման կամ գործողության կասեցման հետևանքները: **Թեմա 14.** Միջազգային պայմանագրերի իրացումը ազգային օրենսդրության միջոցով:

21/Մ4 –Իրավաբանի մասնագիտական էթիկա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է բացահայտել իրավաբանի մասնագիտական էթիկայի նշանակությունը, ապահովման հիմնախնդիրները, էթիկայի հիմնական սկզբունքները, ձևավորել վստահորդների և այլ շահառուների հետ իրավաբանի գործնական աշխատանքի հմտություններ, պարզաբանել հարցազրույց վարելու կանոնները, իրավաբանի մասնագիտական գործունեության էթիկական նորմերը, սոցիալ-հոգեբանական կողմնորոշիչները: Դասընթացը կոչված է ուսանողների մոտ ձևավորել իրավաբանի մասնագիտական էթիկայի պատշաճ իմացություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ էթիկայի՝ որպես փիլիսոփայական ըմբռնման հասկացությունը, իրավաբանի մասնագիտական էթիկայի հասկացությունը, իրավաբանի մասնագիտական նկարագրի բաղադրիչները, իրավաբանի մասնագիտական էթիկայի նշանակությունը, իրավաբանի մասնագիտական էթիկայի տեսակները, էթիկայի ապահովման միջոցներն ու ձևերը, իրավաբանի աշխատանքի էթիկա-հոգեբանական հիմնախնդիրները:

Կկարողանա՝ անցկացնել արդյունավետ հարցազրույց և ճիշտ հարցադրումներ կատարել հարցազրույցի ընթացքում, մատուցել որակյալ իրավաբանական խորհրդատվություն, ճիշտ կողմնորոշել հաճախորդին, պահպանել խորհրդատվության իրավական և էթիկա-հոգեբանական կանոնները, կատարել իրավաբանական գործի ճիշտ վերլուծություն,

իրավաբանական գործով մշակել պատշաճ դիրքորոշում, կատարել իրավական ակտերի բազմակողմանի վերլուծություն,

Կտիրապետի՝ քաղաքացիներին իրավաբանական օգնություն ցուցաբերելու կանոններին, իրավաբանական խորհրդատվություն մատուցելու էթիկական սկզբունքներին, հարցաքննության, առերեսման, ճանաչման ներկայացման և այլ դատավարական գործողությունների էթիկական նորմերին, փաստաբանի պաշտպանական ելույթի առանձնահատկություններին, դատախազի մեղադրական ելույթի առանձնահատկություններին, քաղաքացիական հայցի նախապատրաստման և հարուցման կանոններին, քրեական գործով դիրքորոշման մշակման և կենսագործման կանոններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Իրավաբանի մասնագիտական նկարագիրը: **Թեմա 2.** Էթիկայի հասկացությունը և նշանակությունը: **Թեմա 3.** Իրավաբանի մասնագիտական էթիկայի հասկացությունը: **Թեմա 4.** Իրավաբանի մասնագիտական էթիկայի սկզբունքները: **Թեմա 5.** Իրավաբանի գործնական հմտությունները: **Թեմա 6.** Իրավաբանի հարցազրույցը վստահորդի հետ: **Թեմա 7.** Իրավաբանական խորհրդատվության հասկացությունը և փուլերը: **Թեմա 8**. Իրավաբանական գործի վերլուծությունը: **Թեմա 9.** Իրավաբանական գործով դիրքորոշման մշակումը: **Թեմա 10.** Դիրքորոշման մշակումը և կենսագործումը քրեական գործով: **Թեմա 11.** Դիրքորոշման մշակումը և կենսագործումը քաղաքացիական գործով: **Թեմա 12.** Քաղաքացիական հայցի նախապատրաստումը և հարուցումը: **Թեմա 13**. Հարցաքննությունը որպես հմտություն: **Թեմա 14.** Փաստաբանի ելույթը դատական վիճաբանություններում:

21/Մ4 Իրավաբանական գրագրություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ իրավաբանական գրագրությանը ներկայացվող ընդհանուր պահանջների, գրությունների կառուցվածքի, բովանդակության և ձևի, կազմելու սկզբունքների ու մեթոդների, իրավաբանական գրագրության առանձնահատկությունների, իրավական փաստաթղթեր մշակելու, մեկնաբանելու և համակարգելու կանոնների, իրավական փաստաթղթերի լեզվի և վավերապայմանների վերաբերյալ, ձևավորել պայմանագրեր և այլ ակտեր նախապատրաստելու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ իրավաբանական գրագրության առանձնահատկությունները, գրությունների կառուցվածքին, բովանդակությանը և ձևին ներկայացվող պահանջները, իրավական փաստաթղթերի նախագծեր կազմելու սկզբունքներն ու կանոնները, իրավական ակտերը վերլուծելու և մեկնաբանելու ձևերն ու մեթոդները, իրավավերլուծական փաստաթղթեր կամելու IRAC մեթոդը, նախադեպային իրավունքի՝ որպես իրավունքի աղբյուրի կիրառման մեթոդաբանությունը, իրավաբանական վարպետության ընդհանուր հիմնահարցերը և իրավաբանական աշխատանքի կատարման առանձնահատկությունները, օրենսդրության համակարգման տեխնիկան:

Կկարողանա՝ կատարել իրավական ակտերի նախագծերի նախապատրաստական աշխատանքներ, ընտրել իրավական դրույթների մեկնաբանման համապատասխան եղանակները՝ լեզվաբանական, տրամաբանական, համակարգային, պատմաքաղաքական, նպատակային, գործառութային, հատուկ իրավաբանական, որոշել իրավունքի կենսագործման համար անհրաժեշտ գործողությունների և փաստաթղթերի շրջանակը, տարբերել այդ փաստաթղթերի տեսակները, կազմել դիմում, լիազորագիր և այլն՝ ելնելով իրավունքի կենսագործման անմիջական ձևից, հետազոտել իրավաբանական գործի փաստական հանգամանքները՝ ելնելով իրավակիրառման տեսակից /կոնկրետացում, վերահսկողություն, վեճի լուծում, սանկցիայի կիրառում/ կատարել ճիշտ որակում, պատրաստել իրավակիրառ ակտի նախագիծ, որը համապատասխանում է իրավական գրագրության և լեզվի պահանջներին ու կանոններին:

Կտիրապետի՝ իրավական ակտեր և իրավաբանական փաստեր վերլուծելու, հետևություններ կատարելու, իրավավերլուծական փաստաթղթեր կազմելու IRAC մեթոդին, իրավական գրագրության և լեզվի տեխնիկային, մտքերն իրավաբանորեն ճիշտ, տրամաբանորեն հետևողական և հասկանալի շարադրելու եղանակներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Իրավաբանական գրագրությանը ներկայացվող ընդհանուր պահանջներն ու հիմնական առանձնահատկությունները: **Թեմա 2.** Իրավական գրություններ կազմելու սկզբունքներն ու մեթոդները, գրությունների կառուցվածքը, բովանդակությունն ու ձևը: **Թեմա 3.** Իրավական փաստաթղթերի վավերապայմանները, իրավաբանական տեխնիկայի

կանոնները, իրավական փաստաթղթեր մշակելու, մեկնաբանելու և համակարգելու կանոնները: **Թեմա 4.** Իրավական-վերլուծական մեթոդաբանության գործնական նշանակությունը. IRAC-ը (Issue, Rule, Analysis, Conclusion)՝ որպես իրավավերլուծական մեթոդ և տեքստուալ միավոր: Հարցադրում և հետևություն (IraC), կանոն (iRac) և վերլուծություն (irAc) **Թեմա 5.** Օրենքի վերլուծություն. ընդհանուր բնութագիր, ինտերնալ և էքստերնալ հնարքներ: **Թեմա 6.** Նախադեպային իրավունքի ընդհանուր բնութագիրը: Նախադեպային վերլուծություն: **Թեմա 7.** Իրավաբանական տեքստերի լեզվական որակների վերլուծություն: **Թեմա 8.** Իրավաբանական փաստաթղթերի մշակման գործընթացը: Իրավական ակտերի շտեմարաններ, դրանցից օգտվելու կանոնները:

23/Մ18 – Շեղվող վարքի հոգեբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ դասախոսություն)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել շեղվող վարքի հիմնական ձևերի, երևույթի ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական մեթոդների հետ, ինչն անհրաժեշտ է հետագա մասնագիտական գործունեության համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ շեղվող վարքի դևիանտալոգիական մեկնաբանությունը, շեղվող վարքի ուսումնասիրության միջառարկայական ուղղվածությունը, շեղվող վարքի վերաբերյալ գոյություն ունեցող տեսական մոտեցումները**:**

Կկարողանա՝ կողմնորոշվել անձնային վարքի դրսևորումների սոցիալ- հոգեբանական բնութագրերում, անձի սոցիալականացումը դիտել որպես մեկ միասնական ուղղագիծ գործընթաց, հայտնաբերել և բացահայտել շեղվող վարքը՝ որպես ինքնուրույն սոցիալական միավոր:

Կտիրապետի՝ շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական բնութագրերին, շեղվող վարքի համակողմանի մոտեցումներին, շեղվող վարքի դրսևորման սոցիալ-պատմական դինամիկայի վերլուծության հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. ‹‹Շեղվող վարքի հոգեբանություն›› առարկան և խնդիրները: Հասկացություն շեղվող վարքի մասին: **Թեմա 2.** Վարք, դրդապատճառներ, շեղվող վարք: **Թեմա 3.** Շեղվող վարքի դրդապատճառները: **Թեմա 4.** Շեղվող վարքի հիմնական ձևերը: **Թեմա 5.** Շեղվող վարքի անձնային գործոնները: **Թեմա 6**. Սոցիալականի և կենսաբանականի հարաբերությունը: **Թեմա 7**. ‹‹Դժվար դաստիարակվող›› դեռահասների հոգեբանությունը: **Թեմա 8.** Շեղվող վարք ունեցող անչափահասներ: **Թեմա 9.** Անչափահասների հանցավոր ենթամշակույթը (սուբկուլտուրան): **Թեմա 10.** Բացասական հուզական դիրքորոշման նախադրյալները: **Թեմա 11.** Քրեականացման հոգեբանական գործընթացը: **Թեմա 12.** Թմրամոլությունը, հարբեցողութունը և թունամոլությունը որպես անչափահասների ասոցիալ վարքի ձևեր: **Թեմա 13.** Շեղվող վարքի կանխարգելումը: **Թեմա 14.** Շեղվող վարք ունեցող անձի վերադաստիարակումը:

23/Մ1 – Անձի հոգեբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (28 ժամ, 20 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մի բնագավառի, որը տեսական-գիտական գիտելիքներ է պարունակում մարդու՝ որպես անձնավորության, ձևավորման և զարգացման, կառուցվածքի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ հոգեբանության մեջ անձի հիմնախնդրի վերաբերյալ տեսական հայեցակարգերի, անձի տիպաբանության և կառուցվածքի, անձի ձևավորման, զարգացման և կայացման մասին:

Կկարողանա՝ պրոբլեմային իրադրություններում ինքնուրույն վերլուծություններ կատարել, հոգեախտորոշման մեթոդները կիրառելով գիտահետազոտական աշխատանքներ կատարել և շտկողական ուղիներ մշակել, գիտակցել անձի պահանջմունքադրդապատճառային, հուզական և վարքագծային ոլորտների առանձհահատկությունները, բնութագրել մարդու

խառնվածքը, մոտիվացիայի և վարքի դրսևորումները, իրականացնելով հոգեախտորոշում՝ կողմնորոշվել միջանձնային հարաբերություններում:

Կտիրապետի՝ հոգեբանության գիտության հետազոտման մեթոդներին, հոգեկան գործընթացների, հոգեկան վիճակների և անձնային հատկությունների փոխկապվածության սկզբունքներին մասնագիտական գործունեությունը իրականացնելու համար, հոգեբանական մյուս գիտությունների ուսումնասիրության հմտություններին՝ հիմնվելով ընդհանուր հոգեբանության տեսական հիմունքների վրա:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ընդհանուր գաղափար անձնավորության մասին: **Թեմա 2.** Անձի հոգեբանության գիտության զարգացման փուլերը: **Թեմա 3**. Բ. Գ. Անանևի ուսմունքը մարդու մասին: **Թեմա 4.** Անձնավորության կառուցվածքը: **Թեմա 5.** Անձը որպես գործունեության սուբյեկտ: **Թեմա 6.** Պահանջմունքադրդապատճառային ոլորտ: **Թեմա 7.** Դրդապատճառականություն, գործունեություն, անձնավորություն: **Թեմա 8.** Անձնավորության սոցիալական հարմարումը (ադապտացիան): **Թեմա 9.** Մարդու ինքնագիտակցությունը: **Թեմա 10.** Զ. Ֆրոյդի անձի հոգեդինամիկ տեսությունը: **Թեմա 11.** Ա. Ադլերի անհատական տեսությունը անձի վերաբերյալ: **Թեմա 12**. Կ. Գ. Յունգի անալիտիկ հոգեբանությունը: **Թեմա 13**. Է. Ֆրոմմի անձի տեսությունը: **Թեմա 14.** Հոգեվերլուծական ուղղությունները: **Թեմա 15.** Մարդասիրական ուղղությունը:

5. Հետազոտական կրթամաս

Գիտահետազոտական աշխատանք – (15 կրեդիտ)

2-րդ, 3-րդ, 4-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Գիտահետազոտական աշխատանքի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինքնակրթության և ինքնազարգացման, մասնագիտական որակների բարձրացման և որոնողական-հետազոտական ինքնուրույն գործունեությունը կազմակերպելու սկզբունքներին, ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական գրականություն ուսումնասիրելու, ուսանողներին հասցեագրվող նյութերն առանձնացնելու, դրանք ուսանողների ինքնուրույն գործունեությանը ծառայեցնելու կարողություն:

Գիտահետազոտական աշխատանքի իրականացման արդյունքում ուսանողը.

Կիմանա՝ դասախոսությանը (սեմինարին, գործնական աշխատանքին) նախապատրաստվելու սկզբունքները, ձևերը և եղանակները, հենց լսարանում տվյալ թեմայից գիտելիք ստանալու և հաղորդելու սկզբունքներն ու մեթոդները, ուսանողների մասնագիտական կարողությունները և հմտությունները ձևավորելու և զարգացնելու մեթոդները, ուսանողների հետ գիտական-մեթոդական, մասնագիտական առումներով համագործակցելու և շփվելու սկզբունքները, ուսանողների որոնողական-հետազոտական ինքնուրույն գործունեությունը ղեկավարելու սկզբունքները,

Կկարողանա՝ անհրաժեշտ նյութեր (էլեկտրոնային և տպագիր) հավաքել և նախապատրաստվել դասախոսությանը, սեմինարին կամ գործնական աշխատանքին, ապահովել մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումը, լսարանում աշխատեցնել ուսանողներին՝ կիրառելով ուսուցման ակտիվ մեթոդներ, խթանել ուսանողների որոնողական-հետազոտական գործունեություն ծավալելու կարողությունը, համագործակցել ուսանողների հետ մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացում,

Կտիրապետի՝ տվյալ դասընթացի ուսումնասիրության կազմակերպման սկզբունքներին, մասնագիտական գրականություն ուսումնասիրելու, ուսանողներին հասցեագրվող նյութեր առանձնացնելու, դրանք ուսանողների ինքնուրույն գործունեությանը ծառայեցնելու կարողությանը, ուսանողների հետազոտական գործունեությունը խթանելու և ղեկավարելու սկզբունքներին, ինքնակրթության և ինքնազարգացման, մասնագիտական գիտելիքների հարստացման սկզբունքներին, համացանցից, ուսուցման նորագույն միջոցներից օգտվելու և ուսանողներին այդ ուղղությամբ համապատասխան ցուցումներ տալու ձևերին և եղանակներին:

Գիտամանկավարժական պրակտիկա - (6 կրեդիտ)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Պրակտիկայի նպատակը.

Գիտամանկավարժական պրակտիկայի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացի նախագծման, պլանավորման, իրականացման, արժևորման և գիտամեթոդական հետազոտություններ իրականացման հմտություններ:

Պրակտիկայի ավարտին ուսանողը.

Կիմանա՝ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատության փաստաթղթերի բովանդակությունը և կառուցվածքը, ուսուցման մեթոդների և արդի տեխնոլոգիաների կիրառման պայմանները և ձևերը, դասընթացի ծրագրի բովանդակությունը, ուսումնական պարապմունքների տիպերը, կառուցվածքը, առանձնահատկությունները, դասընթացի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան, դասախոսի ուսումնական աշխատանքի պլանավորման սկզբունքները, ուսանողական ինքնավարության զարգացման մակարդակները և դրանց ձևավորման ուղղությամբ դասախոսի գործունեությունը, ուսանողների հետ շփման ոճերը:

Կտիրապետի՝ իր մանկավարժական և գիտամանկավարժական գործունեությունը ծրագրելու, վերլուծելու, դասախոսի ուսումնական գործունեությունը դիտելու և վերլուծելու, ուսումնական պարապմունքի ընթացքն արձանագրելու, դրանք ըստ առանձին բաղադրամասերի վերլուծելու, ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդների, միջոցների և ձևերի կիրառման, մեթոդական և գիտամեթոդական ուսումնասիրություններ իրականացնելու, սեփական մանկավարժական գործունեությունը վերլուծելու և գնահատելու հմտություններին, պատշաճ կերպով շփվել ուսանողների հետ և հետևել նրանց գործունեությանը, իրականացնել ախտորոշման (դիագնոստիկ) և մշտադիտարկման (մոնիթորինգային) աշխատանքներ, վերլուծել ուսումնական պլանը, առարկայական ծրագիրը, դասագիրքը, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները կանխատեսելու մեթոդներին, եղանակներին, կատարել դասալսումներ, կազմակերպել դրանց քննարկումներ, ինքնուրույն նախագծել, նախապատրաստել, կազմակերպել, անցկացնել դասեր, արտալսարանային պարապմունքներ, դաստիարակչական միջոցառումներ, գնահատել կատարված աշխատանքները, աշխատել՝ համագործակցելով գործընկերների հետ, իրականացնել ուսումնական գործընթացի մշտադիտարկում, կանխատեսել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները:

Գիտահետազոտական պրակտիկա- 6 կրեդիտ

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Գիտահետազոտական պրակտիկայի նպատակն է մագիստրանտների մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը, համակարգումը և ամրագրումը, նրանց մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ և փորձարկումներ կատարելու կարողությունների ձևավորումը:

Պրակտիկայի արդյունքում ուսանող տիրապետում է.

- գիտական հետազոտություններն ինքնուրույն պլանավորելու և իրականացնելու կարողությունների,
- գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական դրույթների և դրանք մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքներում կիրառելու կարողությունների,
- մասնագիտական գրականության ուսումնասիրության ու աղբյուրագիտական աշխատանքներ իրականացնելու և այդ ոլորտում տեղեկատվության ու հաղորդակցության միջոցներն ու տեխնոլոգիաները կիրառելու կարողությունների,
- գիտական հետազոտությունների մեթոդներն ընտրելու, դրանք հետազոտության նպատակներին և խնդիրներին համապատասխանեցնելու և կիրառելու կարողությունների,
- գիտական տեղեկույթ հավաքելու, վերլուծելու, համակարգելու և մշակելու ժամանակակից մեթոդների օգտագործման կարողությունների,
- հետազոտությունների ընթացքում ծագած խնդիրները լուծելու կարողությունների,
- հետազոտությունների արդյունքները մշակելու կարողությունների,
-հետազոտության թեմային վերաբերող նյութերը հաշվետվությունների, տպագրությունների, զեկուցումների ձևով շարադրելու կարողությունների,
- իրականացրած հետազոտությունը ներկայացնելու և իր առաջադրած դրույթները պաշտպանելու կարողության:

Գիտական սեմինար– 9 կրեդիտ

1-ին, 2-րդ, 3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Գիտական սեմինարի նպատակն է ուսանողների մոտ գիտական աշխատանք կատարելու հմտությունների, տարբեր հայեցակարգային դիրքորոշումներն ուսումնասիրելու և ճիշտ եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորման, ինքնուրույն հետազոտական գործունեություն իրականացնելու սկզբունքների ու մեթոդների յուրացման ուղղություններով:

Գիտական սեմինարի ավարտին ուսանողը.

Կիմանա՝ գիտական աշխատանք կատարելու սկզբունքները:

Կկարողանա՝ ներկայացնել գիտական հաղորդումներ, զեկուցումներ, վարել գիտական բանավեճեր:

Կտիրապետի՝ հետազոտական գործունեություն իրականացնելու հիմունքներին, գրախոսություններ պատրաստելու ունակություններին:

Մագիստրոսական թեզի պաշտպանություն – 12 կրեդիտ

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Մագիստրոսական թեզի պատրաստման նպատակն է մասնագիտական գիտելիքների խորացումը, համակարգումը, ուսանողների մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ կատարելու կարողությունների ձևավորումը:

Մագիստրոսական թեզի ուղղությամբ աշխատանքներ ծավալելու գործընթացի արդյունքում ուսանողը.

Կիմանա՝ տվյալ թեմայի շուրջ մասնագիտական գրականություն հավաքագրելու ուղիները, հավաքած նյութերը խմբավորելու, դասդասելու և համակարգելու սկզբունքները, թեզի թեմային առնչվող նյութերի մշակման սկզբունքները, աշխատանքի պլան կազմելու և իր դիրքորոշումները, գաղափարները, առաջարկությունները շարադրելու սկզբունքները, շարադրանքի մեջ տարբեր հեղինակներից մեջբերումներ անելու, եզրահանգումներ կատարելու սկզբունքները:

Կկարողանա՝ օգտվել համացանցից և տպագիր նյութերից, հավաքել իր թեմային վերաբերող նյութեր, մշակել իրեն անհրաժեշտ աղբյուրները, նշումներ կատարել սկզբնաղբյուրների մասին, իր մտքերը շարադրել հստակ և գրագետ հայերենով, գիտական ոճին բնորոշ սկզբունքներով, կատարել համապատասխան դիտարկումներ և ուսումնասիրություններ:

Կտիրապետի՝ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ կատարելու սկզբունքներին:

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի կրեդիտը	Ծրագրի կրթականվերջնարդյունքները													
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Գ1	Գ2	Գ3	Գ 4
Օտար լեզու՝ մասնագիտական հաղորդակցման ոլորտում (անգլերեն)	2											+			
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում	2							+						+	
Իրավունքի փիլիսոփայություն	5		+												
Պետության և իրավունքի արդի հիմնահարցեր	6	+				+		+							
Իրավունքի սոցիոլոգիա	3	+			+					+					
Իրավունքի արժեբանություն	3	+	+							+					
Իրավունքի բացերը և դրանց հաղթահարման հիմնախնդիրները	4	+		+	+				+	+			+		
Համեմատական իրավագիտություն	3	+								+					
Քաղաքացիության ինստիտուտի ներպետական և միջազգային իրավական ասպեկտները	6	+			+	+	+								

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի կրեդիտը	Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Գ1	Գ2	Գ3	Գ4
Պառլամենտարիզմ և պառլամենտական իրավունք	6	+		+	+	+									
Ընտրական իրավունք	3			+											
Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները	4	+		+	+	+									
Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ	3	+			+	+			+						
Դատական գործերի վերանայման վարույթի հիմնախնդրները	3	+		+	+	+	+		+	+					
Հանրային ծառայության հիմունքներ	3	+			+										
Տեղեկատվական իրավունք	4	+			+	+			+	+				+	
Իրավաբանի մասնագիտական էթիկա	3	+					+		+			+	+	+	
Իրավաբանական գրագրություն	3	+					+		+			+	+	+	
Դիվանագիտական և հյուպատոսական իրավունք	3	+			+										
Միջազգային պայմանագրային իրավունք	3	+			+	+									

Գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանություն	2					+		+	+	+	+	+		+	
Շեղվող վարքի հոգեբանություն	4				+								+		
Անձի հոգեբանություն	4				+								+		
Գիտական սեմինար	9	+			+			+	+	+	+	+		+	
Գիտահետազոտական աշխատանք	15	+	+		+			+	+	+	+	+			
Գիտահետազոտական պրակտիկա	6	+			+			+	+	+	+				
Գիտամանկավարժական պրակտիկա	6	+			+			+	+	+	+		+		+
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	+	+		+			+	+	+	+	+		+	+